№ 18 ՈՒՐԲԱԹ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ 1912 ՈՒՐԲԱԹ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ № 18

ԲԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул. № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1912 Թ. ՀԱՄԱՐ

ԲԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Լոյս տեսաւ եւ վաճառվում է հռչակաւոր
Ֆրանսիացի գրող

ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻ

ԻՆՆՍՈՒՆ-ԵՐԵՔ

նշանաւոր վէպի հայերէն թարգմանութիւնը

„ԱՐՕՐ" ամսագրի

հրատարակութեամբ

Այս կլասիկական չքնաղ վէպը, որի նիւթը վերցված է ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից, պէտք է կազմէ ամեն մի մատենադարանի զարդը և լինի ընթերցանութեան ամենացանկալի նիւթ։

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Ի նկատի ունենալով, որ տպված է միայն 400 օրինակ, ուստի ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստանալ, ուղարկելով իրանց պահանջը և դրամը «Մշակի» խմբագրութեան։

Գիրքը բաղկացած է 432 մեծադիր էջերից։

0—12

ԵՂԲ. Ա. եւ Ա. ՄԻԼՕՎՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Գօլօվինսկի պր., Կադէտսկի կորպուսի դիմաց

սրանով յայտարարում է, որ

ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՕԹՆՈՐԵԱՅ ՍՈՎՈՐԱԿԱՆ

ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔԸ

երկարացված է 2 օրով—ՅՈՒՆՎԱՐԻ 27-ին եւ 28-ին

մետաքսէ, բրդէ, քաթանէ և բամբակէ ապրանքների և անգլիական մահուդից բազմաքանակ կտորների, նոյնպէս և պատրաստի ԶԳԵՍՏՆԵՐԻ և ԲԼՈՒԶԿԱՆԵՐԻ:

ԳՆԵՐԸ ՇԱՏ ԷԺԱՆ ԵՆ

Էժան վաճառքի օրերը ճաշի ժամանակ խանութը փակ կը լինի ժամը 2½-ից մինչեւ 4-ը:

առ. 49. 1—1

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԵՐԻ և սրտի:
Սրսկումներ նաև տուբերկուլիններով:
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը:
Католическая ул. д. № 10. Տելեֆօն № 792.
(չ.ու.) առ. 989. 100—85

ՆՈՐԻՑ ՆՈՅՆ ՀԱՐՑԸ

Մենք նորից ուշադրութեան ենք հրաւիրում դէպի այն հողերը, որոնք գտնվում են ապագայ Եւլախ-Շուշի երկաթուղագծի շրջականերում։

Այնտեղ դեռ մեծ քանակութեամբ հողեր կան մնացած անմշակ և ամայի, որոնք կարող են ազգաբնակութեանը տալ աշխատանքի և ապրուստի առատ աղբիւրներ։

Այդ հողերը սրանից մի 5—6 տարի առաջ շատ էժան էին, բայց այժմ թանգացել են, և ոչ մի կասկած չը կայ, որ մի երկու տարուց յետոյ նրանք աւելի ևս թանգանալու են։

Մեր սակաւահող երկրագործը որոնում է տեղեր իր աշխատանքի գործադրութեան համար. մեր գիւղականը պանդխտում է Անդրկասպեան երկիր, Հիւսիսային Կովկաս, Եւրոպական Ռուսաստան և մինչև անգամ Ամերիկա, մինչդեռ նա կարող էր իր երկրում ապահովաբար հայթայթել այնպիսի մթերքներ, որոնք ոչ միայն բաւականութիւն կը տան նրա առօրեայ պէտքերին, այլ և կարող կը լինեն վաճառահանութեան առարկաներ լինել։

Մեր բոլորի վրա պարտականութիւն կայ դիւրացնելու սակաւահող գիւղացու համար հող ձեռք բերել այն տեղերում, ուր կան անմշակ տարածութիւններ, և այդպիսով ազատել երկրագործին այն հարստահարութիւններից, որոնք առաջ կը գան, երբ հողը կընկնի մենավաճառների ձեռքը և կը դառնայ անմատչելի գիւղական մեծամասնութեան համար։

Այժմ, երբ դեռ Եւլախ-Շուշի երկաթուղին գոյութիւն չունի և նրա կառուցման աշխատանքները չեն սկսված, մենք նկատում ենք, որ հողային հարստութիւնները արդէն բարձր գնահատութեան շաւղի մէջ են ընկնում հէնց միայն այն պատճառով, որ երկաթուղին ծնել է յոյսեր առաջիկայի համար։

Բայց ցանկալի չէ, որ հողավաճառութեան գործում զարգանայ կեղեքչական հակումը և հողը դառնայ սպեկուլեացիայի առարկայ։ Դրանից միայն և միայն կը վնասվի գիւղացիութիւնը, որովհետև վերջ ի վերջոյ նրա ձեռքին է լինելու հողերի մշակութիւնը, բայց աւելի և աւելի աննպաստ և ծանր պայմաններով։

Առանձին անհատներ գիւղացիութեան շրջաններից անկարող են հանդիսանում հողեր գնել, որովհետև մեծ տարածութիւն գնելու համար նրանք դրամական ոյժ չունեն, իսկ փոքր բաժինները առանձին-առանձին չեն ծախվում։

Ջոկ բան է, եթէ հող գնել ցանկացող գիւղացիները հանդէս գան գիւղական համայնքով, կամ յատուկ ընկերակցութիւններով, և կամ գիւղացիական բանկի միջոցով։ Այն ժամանակ նրանք աջողութիւն կը գտնեն և կը մեղմացնեն հողային այն սովը, որ սկսել է զգալ մեր երկրի գիւղացիութիւնը։

Թէ Եւլախ-Շուշի երկաթուղային գծի շրջանում և թէ այն ընդարձակ տարածութեան մէջ, որ այդ շրջանից ձգված է դէպի Արաքսի եզերքը, կան հարիւր հազարաւոր դեսեատին հողեր, որոնց շատ մասերում կարելի է կազմակերպել ընդարձակ արդիւնաբերութիւն։

Մենք մի քանի անգամ խօսել ենք այդ առարկայի մասին և անհրաժեշտ ենք համարում նորից և նորից ընդգծել կարևոր հարցը։

Մենք չենք քաշվում այս հարցի վերաբերութեամբ կրկնութիւններ անելուց, խօսում ենք նրա մասին այսօր, և դարձեալ պէտք է շեշտենք նրա կարևորութեան վրա, որովհետև մարդիկ դանդաղաշարժ են, թմրած և չեն վստահանում կուլտուրական աւելի համարձակ քայլեր անելու։ Այո, այդ հանգամանքի հետ մենք չը պէտք է հաշտվենք, և նորից դիմումներ պէտք է անենք մեր ժողովրդի՝ բոլոր խաւերին աջակցել միմեանց կազմակերպելու հողի նպատակայարմար շահագործութեան համար ապահով հիմունքներ։

Գիւղացիութիւնը հողի պահանջ ունի։ Նա որոնում է մշակութեան տեղեր։

Ինչու միջոցներ ձեռք չառնենք դիւրացնելու նրա համար ազատ հողերից օգտվելու միջոցները։

Պէտք է գտնել այդ միջոցները։

Ա. Քալանթար

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

«Р. Сл.»-ի Պետերբուրգի թղթակիցը յայտնում է հեռախօսով հետևեալը յունվարի 21-ից.

«Սենատի այսօրվայ նիստում, «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի առիթով, երդվեցրին վկաներին, որոնք թւով մօտ 100 են, թէև ընդհանուր քանակը 800-ից աւելի է։

«Յետոյ քննութեան առարկայ եղել է մեղադրվողներից մինը։ Նրա գործած յանցանքների թւում առաջադրվում է նաև մեղադրանք—ինչպէս յայտնեցին սենատի կուլուարներում — սպանութիւն մի անձի, որ մի ժամանակ պատկանում էր նախ քան յեղափոխութիւնը «Դաշնակցութիւն» կուսակցութեան, որ պաշտպանում էր բացառապէս Թիւրք կառավարութեան դէմ հայերի մղած կուի ծրագիրը, և այդ պատճառով բացասաբար էր վերաբերվում նոր ծրագիր ընդունած դաշնակցականների վերջին գործողութիւններին։ 1907 թ. նիստում կուսակցական դատավճռով վերջինս դատապարտվեց մահվան և սպանութիւնը կազմակերպելու համար վճռվեց յատկացնել 50,000 րուբլի»։

Դատավարութեան մանրամասնութիւնները անյայտ են։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յունվարի

Վիէննա.—Կայսրը Մեծ Իշխան Անդրէյ Վլադիմիրովիչին շնորհեց Ստեփանի մեծ խաչը։ Գահաժառանգը՝ ռուսական համազգեստով այցելեց՝ Մեծ Իշխանին ռուսաց դեսպանատանը։

Գահաժառանգը ի պատիւ Մեծ Իշխանի նախաճաշ տուեց, որին ներկայ էին ռուսաց դեսպանատան պաշտօնեաները։

Շէնբրունում տեղի ունեցած ճաշը, ուր ներկայ էին Վիէննայում գտնվող կայսերական տան բոլոր անդամները, նաև Բելվեդէրի նախաճաշը անցան Մեծ Իշխանի և բարձր հիւրերի սրտագին խօսակցութեամբ։ Կայսրը առոյգ էր ու թարմ և վաղուց այնպէս լաւ չէր զգացել իրան։

Երեկոյեան Մեծ Իշխանը գահաժառանգի և սրա կնոջ հետ ներկայ գտնվեց կայսերական թատրոնում։

Բեռլին.—Կայսրը բացեց ռէյխստագի նստաշրջանը գահական ճառով պալատի Սպիտակ դահլիճում։ Սօցիալիստները բացակայ էին։ Գահական ճառում ընդգծված է թէ՝ անհրաժեշտ է պահել ներկայ պետական կազմը. յայտնվում է թէ՝ կապվել են նոր առևտրական պայմանագրեր, չեն երեվելու ներկայ մաքսային քաղաքականութեան հիմունքները. Գերմանիայի բարգաւաճումը և ընդհանուր խաղաղութեան պահպանութիւնը կախված են զինուորական ոյժերից, որոնք ընդունակ են ամեն րոպէ պաշտպանել Գերմանիայի գաղութների անձեռնմխելիութիւնը և նրա ազգային պատիւը. այդ պատճառով կայսրը մշտապէս հոգում է Գերմանիայի զինուորական հզօրութիւնը ամրապնդելու ծովի վրա և թէ ցամաքում. համապատասխան օրինագծեր պատրաստված կան և ներկայացվելու են ռէյխստագին։ Կայսրը շեշտում է իր խաղաղասիրութիւնը, որ ապացուցվեց Ֆրանսիայի հետ համաձայնութիւն կապելով. Նրա քաղաքականութիւնը ուղղված է պահպանելու եռապետեան դաշնակցութիւնը և բարեկամական յարաբերութիւնները միացած պետութիւնների հետ՝ փոխադարձ յարգանքի ու բարեացակամութեան հողի վրա։

Սօֆիա.—Ֆերդինանդ թագաւորը գահաժառանգի չափահաս դառնալու առիթով հրովարտակ հրատարակեց, որի մէջ շնորհակալութիւն է յայտնում ժողովրդին և կառավարութեան՝ դէպի դինաստիան ունեցած մտերիմ կապի ապացոյցը տալու համար, որի մէջ է երկրի լուսաւոր ապագայի գրաւականը։

Մադրիդ.—Հարաւային Սպանիայում մեծ հեղեղներ են. Գվադալկվիվիրը դուրս է եկել ափերից. Սեվիլիայի և Կորդովայի շատ թաղեր ջրի տակն են։ Լէօնում այն գնացքը, որի մէջ գտնվում էր թագաւորը, հարկադրված է եղել կանգ առնել Պալանկինոսի մօտ։ Սանտարեմում ջուրը աստիճանաբար աւելանում է։ Գերեզմանատան պատը քանդվեց։

Հռոմ.—Կարմիր ծովի նաւատորմի հրամանատարը տեղեկացնում է, որ Ջէվանում գտնվող թիւրքական բանակը և նրա շրջակայքի արաբական խրճիթները ռմբակոծվեցին։ Հօդէյդան ռմբակոծութեան չենթարկվեց։

Պարիզ.—Հավասի գործակալութիւնը ճիշտ չէ անուանում այն տեղեկութիւնը, թէ ֆրանսիական կառավարութիւնը մտադիր է արգելք լինել այն պատուէրներին, որոնք Թիւրքիայի և Իտալիայի համար են տրված ֆրանսիական ֆիրմաներին։ Այդ թոյլատրվում է միջազգային պայմանագրերով։

Կօպէնհագէն.—Թագաւորը սովորական զբօսանքի ժամանակ վատ զգաց իրան և անկողին մտաւ։ Ըստ երևոյթին նա լուրջ մրսել է։

Գիշերը թագաւորը հանգիստ անցրեց. տաքութիւնը փոքր ինչ աւելացաւ։ Նկատվեց թոքերի թեթև բորբոքում։

Իշիմ.—Ջինախառն փոթորկի ժամանակ ցրտատար եղածներից առ այժմ ձիւնից հանել են 44 դիակ։

Օմսկ.—Յունվարի 19-ին Պետրոպավլօվի գաւառում ցրտատար են եղել 50 մարդ։

Եալտա.—Թոքերի բորբոքումից մեռաւ կոմս Միլիւտինը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յունվարի

Պետերբուրգ.—Պաշտօնական. Աստրաբադի ռուսական հիւպատոսը հաղորդեց Մազանդարանի նահանգում բռնկված լուրջ անկարգութիւնների մասին, որոնց հողի վրա սկսվել են սպանութիւններ և կողոպուտներ։ Երկրում սկսվել է լիակատար անիշխանութիւն, որը սաստկանում է նրանով, որ յիշեալ վայրը ներկայանում է թատերաբեմ նախկին շահ Մահմէդ-Ալիի և կառավարութեան կողմնակիցների միջև։ Շահի զօրքերի մէջ տիրում է մեծ անկարգութիւն, ըստ որում թուրքմէններին և շահի այլ կողմնակիցներին դժուարութեամբ է աջողվում զսպել Բարֆրուշ և Սարի քաղաքները քարուքանդ անելուց։

Իբրև այսօրինակ դրութեան հետևանքն եղաւ այն, որ տեղական առևտուրը ամբողջովին կանգ է առել, վաճառականները խմբերով բաստ են նստել մեր հիւպատոսարանի շինութեան մէջ։

Ի նկատի ունենալով որ բացարձակ վտանգ է սպառնում ռուսահպատակ- նաև ռուսական հաստատութիւնների շահերին, հիւպատոսը՝ քիչ գտնելով իր ձեռքի տակ գտնվող ոյժերը—երկու կօզակային հարիւրեակ 2 գնդակացիրներով—խնդրում է փութանակի ուղարկել լրացուցիչ զօրք։

Միաժամանակ դրա հետ հեռագրով արտաքին գործերի մինիստրութեանը դիմեցին իրանց շահերը պաշտպանելու խնդիրքով Մոսկվայի մի քանի խոշոր ֆիրմաների ներկայացուցիչները, որոնք առևտուր են անում Մազանդարանի հետ։

Այդ իսկ պատճառով կարգադրվեց ուղարկելու Աստրաբադ 2 հետևակ վաշտ 2 գնդակացիրներով ու 2 լեռնային թնդանօթներով, Բարֆրուշ՝ 1 վաշտ 2 գնդակացիրներով, Մեշեդեսէր՝ 1 վաշտ։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յունվարի

Պէկին.—Պաշտօնական օրգանը, հաղորդելով մօնգօլների Լուբինֆուի շրջանի պետի տան վրա գործած յարձակման մասին Մանջուրիա կայարանի մօտ, մեղադրում է ռուսներին մօնգօլներին գաղտնի աջակցութիւն ցոյց տալու մէջ և յայտնում է, որ մօնգօլները յարձակման ժամանակ ունեցել են ռուսական զէնք. յարձակվողների թւում էին ռուսական օֆիցերների և զինուորների զգեստներ հագած մարդիկ, որոնցից սպանվեց մի օֆիցեր և վիրաւորվեցին մի քանի զինուոր։ Պաշտօնական օրգանը պահանջում է բողոքել չէզոքութիւնը խախտելու դէմ և կատարել խստագոյն քննութիւն։

Շանխայգուան-Մուկդէն գծի վրա պայթումից քանդվեց երկաթուղային կամուրջը։ Կան շատ սպանվածներ և վիրաւորներ։

Մուկդէն.—Քաղաքը պատրաստվում է ինքնապաշտպանութեան։ Ցիցիկարի և Գիրինի իշխանութիւններին պատուիրագրվեց ուժեղացնել հսկողութիւնը կասկածելի տարրի վրա և կալանաւորել անծամ չինացիներին։

Շանխայ.—Լուրերի համաձայն Սունեատսէնը հեռագրով առաջարկել է Իւանշիկային սահմանել երկարատև զինադադար։

Տանշաօյին և Ուտինֆանը վերադարճան Նանկինից, որոնք հաղորդում են, որ սպասվում է խաղաղ համաձայնութիւն։ Համաձայնութեան մի քանի կէտերը դեռ չեն հաստատված, բայց դա սոսկ ժամանակի հարց է։

—

Շանխայ.—Մաքսային հասոյթ դեկտեմբերին և յունվարին ստացվեց 5.100,000 լան։ Ամբողջը գործադրվելու է արտասահմանեան փոխառութիւնների վճարները տալու համար։

Արծաթի գինը անսովոր կերպով աւելանում է։

—

Չիֆու.—Եկաւ 3 նաւ ռազմամթերքով։

Ցեղափոխականները ծովով դիմում են Լաիչժոուֆու։ Այնտեղի բնակիչները փախչում են Պինդու։

—

Պիկին.—Քաղաքացիական նահանգապետը հրաժարական տուեց։ Դիպլոմատիական բիւրոյի պետն արձակվեց պաշտօնից։

—

Կեախտա.—Ուրգայից ուղարկված կարգադրութեան համաձայն, մոնգոլական պահակախմբի թիւը ռուսաց սահմանակից կէտերի վրա կրճատվում է և ընդհակառակն աւելանում է Մայմաչէնում։

—

Տօկիօ.—Սունեատսէնի քարտուղարը գալով Նանկինից հաղորդեց, որ Սունեատսէնը Ամերիկայից մեկնելուց առաջ պայմանաւորվել է դրամատէրերի հետ 100 միլիօն դոլլարի փոխառութեան մասին, եթէ հանրապետութիւնը իրականանայ։

Կենտրոնի և նացիօնալիստների կուսակցութիւնները որոշեցին կրճատել տալ 50 միլիօնով պետութեան ինքնապաշտպանութեան բիւջէն։

—

Տօկիօ.—Ֆինանսների մինիստրի օգնականը բացատրեց պարլամենտում, որ 850,000 իէնից, որ ծախսված է արդէն չինական գործի համար, մտադրութիւն կայ ամեն ամիս ծախսել կէս միլիօն։ Ցօցուքանի տպարանը Տօկիօյում գաղտնի պատրաստում է Նանկինի կառավարութեան պատուիրած 30 միլիօն լանի արժեթղթերը։ Ամերիկեան չինական սինդիկատը կազմակերպում է 200 միլիօն լանի փոխառութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Քաղաքակրթված երկրներում տօները համագումարների շրջանն է. տօներին են ազատ լինում աշխատանքով ծանրաբեռնվածները, տօներին է հնար լինում ընդհատել սովորական ընթացքը զբաղմունքների և ժողովվել, համախոհների հետ տեսնվել, անցեալը աչքի անցկացնել, գալիքի մասին խորհել։ Գաւառներում ցրված գործիչները տօներին են միշտ ունենում կարճ ժամանակով այցելել մայրաքաղաքները կամ կենտրօնական մեծ քաղաքները, տեսնվել, թարմանալ, նորութեանց տեղեկանալ, երես առ երես խօսակցել և ծանօթանալ մինչև այդ միայն անունով ծանօթ անհատների հետ, իրանց գիտողութիւնների ճշտութիւնը ստուգել։ Այսպիսի համախմբումների օգուտը անվիճելի է. գաւառներում ցրված և կենտրոններում գտնվող համախոհների այս տեսակ մտերմացումը, նպաստելով կողմերի փոխադարձ ճանաչողութեան, առաջ է բերում մտքերի և հայեացքների շփում, որից, եթէ ոչ իսկոյն, գոնէ յետագայում ծագում են նշանակալից հետանքներ, ի նկատ են առնըվում աչքաթող արված հանգամանքները։ Համագումարները քաղաքակրթված հասարակութեան անհրաժեշտ պահանջ են, նրա կուլտուրական լինելու անսխալ ապացոյցներից մէկը։

Պետերբուրգում վերջին ամսվայ ընթացքում տեղի ունեցան մի քանի համագումարներ. գաւառներից մայրաքաղաք էին եկել հազարաւոր ինտելիգենտներ, մասնակցելու համախմբումներին։ Այսպէս՝ երկրորդ Մենդելէեվեան համագումարը ունէր 1,700 անդամ, որից 1,100-ը գաւառացիներ էին, իսկ 600-ը Պետերբուրգում ապրողներ։ Մատեմատիկայի դասատուների համագումարը ունէր 1,200 անդամ, որից 700-ը եկւորներ էին։ Սրանք այնպիսի ցայտուն թւեր են, որ յստակօրէն ցուցադրում են գաւառը, նրա գործիչների հոգեկան ծարաւն ապացուցում և մտքի անկուշտ լինելը մատնանշում, գաւառներում ցրված որոնող ոգիների ինքնազարգացման պահանջը ցոյց տալիս։ Համագումարների նիստերին, բացի ստորագրված անդամներից, միշտ ներկայ են եղել բազմաթիւ հիւրեր Պետերբուրգի հասարակութիւնից, ուսանողներ. այդ հիւրերի թիւը մի քանի դէպքերում երկու-երեք անգամ աւելի է եղել անդամների թւից, օրինակ II Մենդելէեվեան համագումարի բացմանը ներկայ էր 3,000 մարդ, փակմանը աւելի շատ. աստրօֆիզիկայի բաժնում, երբ նախագահում էր Նիկօլայ Մօրօզօվ, ներկայ էին 2,700 մարդ, որից չնչին մասն էին անդամներ։ Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ համագումարները հասարակական մեծ հետաքրքրութիւն են ներկայացրել և օդից կախված չէին։

Ես մտադիր եմ այստեղ պատմել իմ տպաւորութիւններս և կանգ կառնեմ երեք համագումարների վրա, իսկ մնացածների մասին հարևանցօրէն կը յիշեմ։

I

Մենդելէեվեան

1911 թ. դեկտեմբերի 21-ին, չորեքշաբթի օրը, բացվեց 2-րդ Մենդելէեվեան համագումարը—ընդհանուր և գործնական քիմիայի և ֆիզիկայի—Պետերբուրգի կայսերական համալսարանի շէնքում։

Առաջին Մենդելէեվեան համագումարը, ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ 1907 թ. մեծ գիտնականի մահվան հէնց առաջին տարում, 1907 թ. յունվարի 20-ին, 73 տարեկան հասակում, Դ. Ի. Մենդելէեվը մեռաւ, և նրա մահվանից յետոյ միայն ռուսները զգացին, թէ ինչպիսի խոշոր հայրենակից են ունեցել։ Կենդանութեան ժամանակ ռուս մեծ քիմիկոսը չէր վայելում յարգանք, նրան գիտութիւնների Ակադեմիայի անդամ չէին ընտրել, Պետական Խորհրդի անդամ էլ չէր նշանակված. մինչդեռ Մենդելէեվը արժանի էր այդ պատւոյ և բարձր աստիճաններին։ Նրա գիտնականի փառքը ստեղծել է Արևմուտքը։ Իր հայրենիքում Մենդելէեվն ակնածանք և յարգանք ստացաւ միայն մահվանից յետոյ։ Քաղաքական հայեացքներով նա համախոհ էր նախկին ուագ-մինիստր Վիտտէին, այսինքն չափաւոր-սահմանադրական, և Վիտտէի քաղաքականութեան եռանդուն ջատագովը և աջակիցը։ Բայց հասարակութիւնը նրան «սև-հարիւրեականների» թւին էր գումարում, և այդ մեծ սխալ էր։ Մենդելէեվի մահվանից անմիջապէս յետոյ ռուսաց ֆիզիկոսների և քիմիկոսների ընկերութեան մէջ միտք է ծագում «Մենդելէեվեան համագումարներ» կազմակերպել. այն ժամանակվայ լուսաւորութեան մինիստր ֆօն-Կաուֆմանը թոյլատրում է, և անուանի պրօֆեսօրների եռանդի շնորհիւ նոյն տարվայ վերջին Պետերբուրգ է ժողովվում ռուս քիմիկոսների բանակը և ապացուցանում է, որ ինքը ընդունակ է յարգել իրանց մեծ ադէպտների յիշատակը, համաշխարհային անունով հանճարեղ գիտնականի դրօշի տակ աշխատել և շարունակել նրա արածը և թերի թողած աշխատանքը։

Առաջին համագումարից մինչև երկրորդը անցել է չորս տարի. մարդիկ զգաստացել են, նկատում են իրանց առաջվայ սխալները, զղջում են Մենդելէեվին կենդանի ժամանակ պատճառած անախորժութիւնների համար։ 1,460 անդամներից կազմված և դեռ անկազմակերպված ռէակցիան են ճաշակել և այժմ թափվել են համալսարանի դահլիճները՝ ազատ շունչ քաշելու, հին մեղքերը քաւելու, լուսաւոր ապագայով ոգևորվելու, հաւատը պահպանելու համար խրախոյսի խօսքեր լսելու։ Նեղուածք է. համալսարանի ընդարձակ դահլիճները չեն բաւականացնում, պատերը սեղմում են, դըռները կրնկին բաց են։ Կանգնած մի դռան մօտ՝ ես երկար դիտում եմ, և ինձ թւում է, թէ մեղուների փեթակի արկանոց (летокъ) է իմ առաջ։ Բարեժպիտ ալևորները առանձնացած են անկիւններում և անշուշտ իրանց երիտասարդութեան մտապատկերները վերականգնում, համեմատում ներկաների հետ, չափում. գոհ են. արդէն կազմակերպված դիմագծերով, կիսայոգնած հայեացքով կանգնած են նրանք, և ինձ թւում է, թէ փեթակի արկանոցը պաշտպանող պահապան մեղրաճանճերն են, որոնք ամեն ներս մտնողի մօտենում են, հոտը առնում, համոզվում, թէ իրանցից է, և ապա ներս թողնում։ Սեղանների մօտ թըղթերը ձեռներին, ակնոցներով ծանրաբեռնված երևում են արդէն կեանք մտած և աշխատանքի շրջանում գտնվողները, լարված, մտազբաղ հայեացքներով, անորոշ տրամադրութեամբ. այս ու այն կողմն են վազվզում ազատամազով ծածկված ուսանողներ, փարթամ և ճաշակով հագնված անթիւ օրիորդներ, որոնք ճարպկութեամբ ճեղքելով կանգնած հասարակութիւնը մի [illegible] կան տպաւորութիւն թողնում։ Նայում եմ, հետևում այս կեանքին, զարմանում եմ և բարկանում, թէ ինչու մենք էլ այս կեանքով չենք ապրում, ինչու մերայինները չեն ժողովվում իրանց թագուհու շուրջը, ինչու նորելուկները արագօրէն ներս ու դուրս չեն անում, ինչու ծերերը դադարել են մուտքը պահպանելուց և այլ ևս չեն հըսկում մտնողներին... Անվերջ մտորումներ շրջապատում են իմ գիտակցութիւնս. ես վշտանում եմ, որ հանգամանքներին անծանօթ մի հիւր եմ այս փեթակում, և բաւականանալու եմ միայն դիտելով, միջավայրիս մեծութիւնը զգալով, սեփական ոչնչութեան և չնչինութեան կրծող գիտակցութիւնս մեծացնելով ու լալով...

Գ. Տէր-Ռուբինեան

Պետերբուրգ, 13 յունվարի

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

II *)

Այսպիսի տրամադրութեամբ 13 թիւրքահայ պատգամաւորների առաջին խումբը Կ. Պօլսից մեկնում է, և դեռ շոգենաւի մէջ, Սամսոնի առաջ, պարզվում է, որ 13 պատգամաւորներից 9 հոգին արդէն որոշել են Օրմանեանին և Կարապետ եպիսկոպոսին ձայն չը տալ։ Այդ խմբի մէջ, ըստ Եր. Տէր-Անդրէասեանի, կասկածելի են եղել 4 հոգի՝ Վ. Թեքէեան, Օննիկ Չիֆթէ-Սարաֆ, Բարգէն եպ. և Ինճէեան վ.։ Չիֆթէ-Սարաֆ ջերմ Բագրատեան է կամ Սուրէնեան-Դուրեան, բայց Յակոբ Աշոտ եպիսկոպոսը, Միհրդատ Հայկազնը և Եր. Տէր-Անդրէասեանը աշխատում են «յեղաշրջել զայն Դուրեան-Սուրէնեանի»։ «Հակաօրմանեանական հոսանքը կը վարէ մեծ ճարտարութեամբ Յակոբ եպիսկոպոսը»։

Ահա պատգամաւորները հասնում են Բաթում և այստեղ ևս, ինչպէս նկարագրում է Տէր-Անդրէասեանը («Ժամանակ» 1911 9 դեկտ.), կասկածները Չիֆթէ-Սարաֆի, Թեքէեանի և այլոց դաւաճանական մտքերի մասին սաստկացել են արդէն։ Այժմ Չիֆթէ-Սարաֆ մեծապէս հակված է ի նպաստ Կարապետի։ Այդտեղ է, որ Մելեան քահանան «եպիսկոպոսավայել պատարագ» մատուցանելով՝ հրաւիրում է թէյի պատգամաւորներին և «վաւերուն քահանան» պարզում է իր տեսութիւնը «թիւրքահայ եպիսկոպոսի մը ընտրութեան առաւելութիւններուն և մինչև իսկ ստիպողութեան վրայ»։

Բաթումի հայերը

սա միտքը յայտնեցին երկարօրէն, թէ ռուսահայ իրականութեան ներկայ վիճակը—եկեղեցական, կրթական, վարչական—կրնայ միայն թիւրքահայ կաթողիկոսի մը ընտրութեամբ բարուոքել, որքան հնար է որ բարուոքի։ Ժողովրդային կառավարութեան մեքենաներուն իրապէս և գործօնը թիւրքահայ եպիսկոպոս մը միայն կրնայ լոյս տալ ռուսահայ ժողովրդային ուղղութեան։ Ամեն ինչ կաթողիկոսին ձեռքն է հոս վարչական տիրող դրութեան հետևանքով, ռուսահայ կղերականութիւնը շահ ունի այս դրութեան պահպանումէն, որ կը կերակրէ զինքը կը պանծացնէ, կը թուլցնէ և ազատ ուղղութեան չի վարեր ժողովուրդին հոգևոր և կրթական գործերուն մէջ։ Թիւրքահայ եպիսկոպոս մը, եթէ իսկ վարչական կամ մատակարարական կարողութիւններով այնքան օժտուած չըլլայ, կը բաւէ որ ժողովրդային սկզբունքներուն վարժ է Թիւրքիոյ մէջ կէս դարէ ի վեր [illegible] կրնայ նոր ոգի մը մտցնել, ժողովրդականացնել իր անսահման ձեռնհասութեամբ։ Կովկասի մէջ ամեն ուղղութիւն կղերին ձեռքն է. ոչ թաղական խորհուրդ կայ, ոչ հոգաբարձութիւն, ոչ խնամակալութիւն, և ասոնց նմանող առժամեայ մարմիններ և անոնց կազմակերպութեան քանակն ու որակը, մանաւանդ թէ անոնց գործելու մեթոդը ուղղակի կաթողիկոսին իրաւասութենէն, բարեհաճութենէն կախուած են։ Կովկասի մէջ կան ուսեալ հոգևորականներ, բայց ժողովրդային սկզբունքներու գործադրութիւնը կախում չունի ուսումէն, գիտութենէն, աստուածաբանութենէն. ընդհակառակն ուսեալ համարուածները միապետական ձևերուն ամենէն խանդավառ ջատագովներն են, որոնց գլուխը կը գտնուի Կարապետ եպիսկոպոս։ Այսօր Կովկասի մէջ համալսարանական հոգևորականներու պէտք չկայ, այլ աւելի կաթողիկոսի մը, որ ժողովրդային ձեռնհասութեան ոգին տարածէ, քաջալերէ և պաշտպանէ կղերամիտ, յետադիմական ուղղութեան դէմ։ Այս մտքով ու այս նպատակով Կովկասի երիտասարդութիւնը, հայկական նոր սերունդը, իմացական դասակարգը կը փափաքի որ սահմանադրական ուղղութեամբ սնած, վարժուած թիւրքահայ եկեղեցական մը երթայ բազմի Մայր-Աթոռը, Խրիմեանով և Իզմիրլեանով հրահրուած եռանդը օգտակար ընծայելու, նոյն իսկ զայն չափաւորելու համար, բայց ոչ զայն խեղդելու համար, ինչ որ պիտի պատահի, եթէ կովկասահայ մը ընտրուի կաթողիկոս։ Այս է գրեթէ ընդհանուր հոսանքը Դուրեան-Սուրէնեան կուսակցութեան։ Սուրէնեան—որովհետև կանդիդա մը պէտք է—ամենէն յարմարը կը նկատուի պաշտօնական այդ ընտրելիութեան իր պարկեշտ, անբասիր, անկողմնակալի ընթացքին և երկամեայ տեղակալութեան համար։ Գոնէ եղածը պահելու մասին ամենէն յարմար մարդը կենթադրուի, ցորչափ որոշուի անպատճառ ռուսահայ մը նախընտրել։

Դեռ Բաթումի մէջ որոշվում է մերժել Թիֆլիսի մասնաժողովի հրաւէրը այն առարկութեամբ, թէ այդ հրաւէրը ուղղված էր ոչ թէ «թիւրքահայ պատգամաւորութեան նախագահ Յակոբ եպիսկոպոսին, այլ Չիֆթէ-Սարաֆին («Մշակի» ընթերցողները գիտեն, որ մասնաժողովը իր հեռագիրն ուղղել էր Չիֆթէ-Սարաֆին, իբրև ազգային ժողովի ներկայացուցչին, և այդ ժամանակ Թիֆլիսում ամենևին յայտնի չէր, թէ Յակոբ եպիսկոպոսն ևս գալու է)։

Այս հանգամանքը շատ պարզ կերպով ցոյց է տալիս, թէ թիւրքահայ պատգամաւորները, դեռ ոտք չը կոխած Կովկաս, որոշում են որևէ շփում կամ հաղորդակցութիւն չունենալ Ռուսաստանի թեմերի պատգամաւորների հետ, հետևաբար նրանց արդարացումը, թէ ջանքեր գործ դրվեցին՝ համաձայնութեան գալ, միանգամայն ճշմարիտ չէ։

Բայց ամենից կարևորն այն է, որ Եր. Տէր-Անդրէասեան, հասնելով Թիֆլիս, անմիջապէս նոյեմբերի 30-ին հաղորդում է «Ժամանակին», թէ իբր «Կովկասի Փոխարքան յայտարարել է մինչև իսկ, թէ չի ցանկար, որ Օրմանեան ընտրուի, որովհետեւ ճիզուիթ չուզեր»։

Ի հարկէ, ստախօս Եր. Տէր-Անդրէասեանը զգուշանում է յայտնել, թէ ո՛վ հաղորդել է իրան Փոխարքային վերագրված այդ խօսքերը, որ, երևի, իր նման մի ստախօս դիտմամբ հնարել է՝ տպաւորութիւն գործելու համար թիւրքահայ պատգամաւորների վրա...

Ապա միայն Թիֆլիսում Եր. Տէր-Անդրէասեան իմանում է, որ «հաւանական ընտրելիներուն շարքին մէջ Թիֆլիսը հատ մըն ալ ունի՝ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէսեանը»։

Այդ թղթակցութիւնից իմանում ենք նաև, որ ամենահզօր պատգամաւորը՝ Միհրդատ Հայկազնն է, որ յայտարարել է, թէ «ինքզինքը Կուր գետը պիտի նետէ, եթէ գործը անյաջողութեան մատնուի...» (կէտերը «Ժամանակինն» են), այսինքն եթէ իր միսիան—Օրմանեանի ընտրութիւնը տապալել—անաջող անցնի։ Նա չէ բացատրում, ի հարկէ, թէ այդ միսիան

---

*) Տես «Մշակ» № 17.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ո՞ՐՆ Է ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ

Այս հարցը եթէ տրվէր մեզանից 25 տարի առաջ՝ ամեն մի բանասէր կը պատասխանէր—1567 թվականը, երբ Եվդոկիացի Աբգար դպրի ձեռքով տպվեց Վենետկում Սաղմոսարանը։ (Սրա համար հայերէն գրեր փորագրելու և տպագրելու իրաւունքը ստացվել էր պապից 1565-ին. ուստի ոմանք այս վերջին թվականն էին համարում հայերէն տպագրութեան առաջին տարին)։ Բայց անցեալ դարի 80-ական թվականների վերջերին և 90-ականի սկիզբներին հետզհետէ երևան եկան հին հայերէն, ոչ գրչագիր, գրքեր, որոնք մինչև այն ժամանակ անծանօթ էին։ Մասնագէտները նկարագրեցին այս գրքերը հանդէսների մէջ («Հանդէս Ամսօրեայ», 1889, հոկտեմբեր, 1894 դեկտեմբեր. «Բազմավէպ» 1890, մարտ), որոնցից օգտվեցին ապա հայերէն տպագրութեան պատմութիւնների հեղինակները (Հ. Զարբհանալեան՝ 1895, Լէօ՝ 1900 և 1902)։ Այս գրքերը թվով հինգ են—1) Պարզատումար, 2) Պատարագատետր, 3) Ուրբաթագիրք, 4) Տաղարան և 5) Աղթարք։ «Բազմավէպը» այս գրքերից մի քանիսից նմանահանութեամբ արտատպել է $3^1/_2$ երես, (որոնցից $1^1/_2$ երեսը զետեղված են նաև Զարբհանալեանի Տպագրութեան պատմութեան մէջ). իսկ «Հանդէս Ամսօրեան», նոյնպէս նմանահանութեամբ, մի ուրիշ երես։

Այս գրքերի հրատարակութեան ժամանակի նկատմամբ բոլոր ուսումնասիրողները համակարծիք են։ Գրքերից չորսը լոյս են տեսել 1513 թվին, ինչպէս երևում է նրանց մէջ գտնված յիշատակարաններից. իսկ մէկինը, Պարզատումարինը, ճիշդ յայտնի չէ։ Հիմնվելով սակայն այն հանգամանքի վրա, որ այս տոմարում բերված առաջին տարին է հայոց ՋԿԱ (961=Քրիստոսի 1512) թվականը և իր «գիր տարւոյն Ն»՝ բանասէրները հետևցնում են, թէ հէնց այդ 1512-ին էլ պէտք է լինի տպված այս գիրքը, «կամ քանի մը ամիս, և գուցէ նոյն-իսկ տարի մը յառաջ սկսած է, որպէսզի նշանակուած 961 տարւոյն համար տոմարը պատրաստ ու գործածելի ըլլայ»։ (Հ. Գ. Գովրիկեան, «Հանդէս Ամս.» 1889 հոկտ.)։ Այս ենթադրութիւնը հաւանական է, ինչպէս հաւանական է և այն, թէ գուցէ այս 961=1512-ին սկսված լինի գիրքը, բայց լոյս տեսած լինի յաջորդ 1513-ին, միւս գրքերի հրատարակութեան տարին։

Զարբհանալեանը, այս գրքերի հիման վրա, հայոց տպագրութեան սկիզբը իր գրքի մէջ նշանակում է 1512—13 թվականները, իսկ գրքի երեսին դնում է միայն 1513։ Այսպէս էլ Լէօն իր Հայկական տպագրութեան պատմութեան մէջ առաջին տպագրութեան տարին համարում է 1512 թիվը, բայց գրքի առաջաբանում, որ գրված է 1900-ի յունիսին, ասում է. «13 տարուց յետոյ 400 տարի կանցնէ այն օրից, երբ լոյս տեսաւ հայերէն առաջին տպագրված գիրքը». ուրեմն Լէօն էլ իր գրքի առաջաբանում հայերէն տպագրութեան առաջին տարին համարում է 1513 թվականը (1900+13—400)։

Այս առերևոյթ հակասութիւնը, որ նկատվում է երկու հեղինակների մէջ ևս, բացատրվում է նրանով, որ, ինչպէս ասացինք, Պարզատումարի հրատարակութեան ճիշդ տարին յայտնի չէ, հաւանօրէն տեղի է ունեցել 1511—13 թվականներին, այն ինչ միւս չորս գրքի տարին յայտնի է—1513 թվականը, որի վրա իրավացի կերպով կարելի է կանգ առնել՝ իբրև այս հրատարակութիւնների առաջին տարվայ վրա։

Այս հինգ գրքերի երևան գալու պատճառով՝ մեր յօդվածի վերնագրում դրված հարցին—որն է հայ տպագրութեան առաջին տարին—վերջին 20—25 տարում սկսեցին տալ ուրիշ պատասխան՝ 1512—13 թվականը։ Ինչպէս քիչ վերը նկատեցինք՝ այս երկու տարիներից թէ հ. Զարբհանալեանը և թէ Լէօն անկասկածելի, ուրեմն և ճիշդ համարում են 1513 թվականը. բայց վերջերս մեզանում մամուլի մի որոշ մասը ձայն է բարձրացրել՝ ներկայ 1912 թվին տօնել հայերէն առաջին տպագրութեան 400-ամեակը, և Կ. Հ. Հրատ. Ընկերութիւնը ամսիս 28-ին ժողով է հրավիրել այդ յօբելեանը տօնելու մասին խորհրդակցելու համար։

Բայց մենք լուրջ հիմքեր ունենք կարծելու, թէ ո՛չ 1512-ին և ոչ 13-ին հայերէն լեզվով տպագրութիւններ չեն եղել, այսինքն թէ վերոյիշեալ 5 գիրքը տպագրութիւններ չեն։ Սրա համար պէտք է փոքր ինչ մանրամասն ծանօթանալ այդ հրատարակութիւնների հանգամանքներին։

Ո՞վ է այդ գրքերի հրատարակիչը կամ տպագրողը։ Այս կարևոր հարցին պատասխան չեն պարունակում եղած 5 գրքերից և ոչ մէկը։ Յիրավի, գրքերից մէկի մէջ կայ հետևեալ յիշատակարանը. «Գրեցաւ ս″Ր. տառս... ձեռամբ մեղապարտ Յակոբին...»։ բայց բանասէրները այս անծանօթ Յակոբին իրավացի կերպով չեն համարում տպագրիչ կամ հրատարակիչ, մանավանդ որ կասկած է յարուցանում «գրեցաւ» բառը։ Ոմանք կարծում են, թէ «գրեցաւը» վերաբերում է ձեռագրին, որից կատարված է տպագրութիւնը. ոմանք էլ կարծում են, թէ այդ բառը պէտք է գործածված լինի «տպագրեցաւ» բառի տեղ, երբ վերջին բառը դեռ գոյութիւն չունէր։

Սակայն երկու կարծիքն էլ անընդունելի են։ Տպագրութեան գործի մէջ ոչ մի արժէք չունի ձեռագիրը, որից կատարվել է շարվածքը, որպէս զի գրքի մէջ արժան լինէր յիշատակութիւն դնել հէնց բնագիր-ձեռագրի մասին, լռութիւն պահպանելով աւելի կարևորի—տպագրողի մասին։ Երկրորդ կարծիքն էլ հաւանական չէ այն պատճառով, որ երբ տպագրութիւնը հրապարակ է բերվում իբրև հակակշիռ գրչութեան, իբրև նոր երևոյթ՝ շատ անբնական կը լինէր, որ այդ նոր երևոյթը կոչվէր հէնց այն բառով, որով կոչվում էր հինը—հակառակը. մի բառ անշուշտ պէտք է գտնէր այդ Յակոբը՝ ցոյց տալու համար, թէ այդ գիրքը ոչ թէ «գրեցաւ», այլ մի ուրիշ կերպ հրատարակվեց։ Մեզ օրինակ Աբգար դպիրը, որ իր տպագրած Սաղմոսի յիշատակարանում ասում է. «Ամէնն ԲԾԿԲ (=262) թուխտ է. ամէնն կոխած է՝ և իսկի գրչագիր չի կայ ի գիրքս»։ Շատ բնական արտայայտութիւն—այս գրքում իսկի գրչով գրած բան չը կայ, բոլորը «կոխած է», այսինքն տպագրած։ Աբգար դպիրը գտել է մի բառ, «կոխել», արտայայտելու համար մեր այժմեան «տպագրել» բառը։ Յետոյ սկսեցին գործածել այդ բառի թուրքերէն համանիշը՝ պասմա, մինչև որ ընդհանրացաւ տպագրութիւն բառը։

Չընդունելով «գրեցաւ» բառին տրված երկու մեկնութիւնը՝ քիչ յետոյ մենք կը տանք նրան ուրիշ բացատրութիւն, որ կապվում է մեր միւս եզրակացութիւնների հետ։

Յակոբին չը համարելով տպագրող՝ բանասէրները ենթադրում են, որ այդ հինգ գրքի տպագրողն եղել է (գուցէ հայազգի վաճառականների նախաձեռնութեամբ) մի վենետիկցի օտարազգի անձն, որի անվան սկզբնագրերը դրոշմված են այս գրքերի վրա մի խաչկեր շրջանաձև նշանագրոշմի մէջ՝ D. J. Z. A., ինչպէս հին տպարանների սովորութիւնն էր։ Բայց ո՞վ է այս տպագրիչը։

Հ. Զարբհանալեան և հ. Գովրիկեան, որոնք շատ հետամուտ են եղել այս սկզբնատառերի տակ թաքնված տպագրողի իսկական անունը գտնելու՝ չեն աջողել։ Հ. Գովրիկեանը հետազօտել է մի մասնագիտական աշխատանք, որ պարունակում է հին տպարանների 500 նշանագրոշմներ, բայց նրանց մէջ չէ գտել յիշեալ հայերէն հինգ գրքերի մէջ գտնված նշանագրոշմը և սկզբնատառերը։ Այս երևոյթն էլ ըստ մեզ ունի իր բնական բացատրութիւնը։

Մի ուրիշ աչքի ընկնող հանգամանք էլ այն է, որ այս հրատարակութիւնները ո՛չ յիշատակ թողին ազգի մէջ, ո՛չ հետևողներ ունեցան և ոչ յայտնի է, թէ ի՛նչ եղան այն տառերը, որոնցով այդ գրքերը տպված են։ 1513 թվականից յետոյ, երբ այդ գրքերը տպվել են՝ ամբողջ 54 տարի ոչ մի ուրիշ հայերէն տպագրութեան չենք պատահում։ Աբգար դպիրը, որ նոյն Վենետիկ քաղաքում տպագրեց իր սաղմոսը 1567-ին, ո՛չ այդ տպագրութիւնները գիտէ, ո՛չ տպարանը և ոչ տառերը, այնպէս որ ինքը միամիտ սրտով տառեր է փորագրել տալիս իր տպագրութիւնների համար և իր սաղմոսը իբրև բոլորովին նորութիւն է ներկայացնում ժողովրդին՝ ասելով, թէ նրա մէջ ոչ մի գրչագիր չը կայ, բոլորը «կոխած է»։ Այն-ինչ թէ Աբգարի և թէ մեր ուրիշ հին տպագրողների տպարանների և տառերի մասին հասել են մեզ բավական տեղեկութիւններ, մէկի սկսածը միւսը շարունակել է, և այսպէս, Աբգարից սկսած, հայերէն տպագրութիւնը անընդհատ շարունակվելով հասել է մինչև մեր օրերը։ Այդ հինգ գիրքն են միայն, որ անանուն, անտէր, կղզիացած ընկած են ժամանակագրութեան մէջ, առանց հետք և հետևող թողնելու։

Այս բոլոր տարօրինակութիւնները միանգամից կը պարզվեն՝ եթէ ասենք, որ այդ հինգ գրքերը տպագրութիւններ չեն, այլ փայտի վրա փորագրութիւններ (ксилографія)։

Ս. Մալխասեանց

(Վերջը միւս անգամ)

ծվ էր տուել հզօր Միհրդատին, իր կուսակցութիւնը թէ ազգային ժողովը: Ցամենայն դէպս, լաւ եղաւ, որ Օրմանեան չընտրվեց, որովհետև հայ ազգը Թիւրքիայում պէտք է մեծ դժբաղդութեան ենթարկվէր, տեսնելով իր հզօր պաշտպանին գետամոյն եղած:

Դեկտեմբերի 2-ին հզօր Միհրդատ Հայկազն արդէն Անի քաղաքումն է, և այդտեղից Եր. Տէր-Անդրէասեանը, իբրև հայութիւնը ցնցելու ընդունակ մի մեծ լուր, հաղորդում է, թէ Սամսոն քահանայ տէր-Գարեգինը պատարագեց և Միհրդատ Հայկազն ևս եղաւ դպիր:

Դեկտեմբերի 3-ին Թիւրքահայ պատգամաւորներն արդէն Էջմիածնումն են և անմիջապէս համոզվում են, որ «բոլոր օրմանեանականները զինված են ամեն տեսակ զէնքերով» (ինչպէս գիտեն «Մշակի» ընթերցողները, Օրմանեանի ընտրութեան կողմնակից աշխարհական պատգամաւորները Էջմիածին գնացին դեկտեմբերի 7-ից ոչ առաջ), որ «հանգուցեալ հայրապետը (Իզմիրլեան) անհագին տառապանքների ենթարկվել է և ինտրիգների է զոհվել», որ Գարեգին վ. Յովսէփեանը «կատախմբին մէջ ամեն տեսակ անարգանք ըրաւ ազգային ժողովին, Իզմիրլեանին և բոլոր Թիւրքահայ ժողովրդի հասցէին»:

Ապա Ե. Տէր-Անդրէասեանը ողբում է, որ «Թիֆլիսի մէջ տակաւին խորհրդակցութիւններ կը կատարեն մշակականներու մասնակցութեամբ... Թիւրքահայ պատգամաւորներէ ոմանք»: Այդ հանգամանքը սաստիկ վայրոյթ է պատճառում նրան, ուստի չէ մոռանում կարգալոյծ Երուանդ վարդապետին ևս հայհոյել, որ դաւեր է սարքում ի նպաստ Օրմանեանի:

Դրանից յետոյ Երուանդ էֆ.-ի թղթակցութիւնները ընդհատվում են՝ մինչև դեկտ. 24-ը: Այդ օրից «Ժամանակի» մէջ տպված է նրա մի նոր թղթակցութիւնը դեկտեմբերի 12-ից, Էջմիածնից, և այնուհետև այլևս չենք ստացել «Ժամանակի» համարները: Բոլոր մինչև այժմ թղթակցութիւնները նկարագրում են այն մեծ վտանգը, այն մեծ աղէտը, այն անհուն դաւադրութիւնները, դաւաճանութիւնները, որ օրմանեանականները կամենում են բերել խեղճ հայ ազգի գլխին և դարբնում ու երկնում են Էջմիածնի դէմ: Չէ մոռանում, ի հարկէ, ասել, թէ երբ բողոքող պատգամաւորները դուրս եկան, դրսում պոռացին՝ «կորչէն դուրեանականք» չէ մոռանում հայհոյել և Բարգէն եպիսկոպոսին և նոյն իսկ Վ. Թէքէեանին, որ իր ձայնը չէ տուել Դուրեանին, բայց Զիֆթէ-Սարաֆին, որ իր ձայնը տուել էր նաև Դուրեանին, նա վերջին պահուն գովում է, չը նայելով որ առաջ յայտարարել էր նրան կասկածելի: Եւ, երևի՝ ի տրիտուր այն մեծ շնորհին, որ Զիֆթէ-Սարաֆ արժանացաւ գովասանք լսելու Եր. Տէր-Անդրէասեանի պէս մարդու բերանից, գոնէ վերջին պահուն, Զիֆթէ-Սարաֆ հարկ համարեց դառնալ նրան ընկեր, տպելով մի կեղտոտ և ազգային ժողովի ներկայացուցչին միանգամայն անվայել զրպարտական յօդուած, թէ օրմանեանականները մատնութիւններ են կատարել, թէ Կարապետ եպիսկոպոսն է սպանել Իզմիրլեանին և այլն:

Այժմ անցնենք այն սուտութիւններին, որ Երուանդ էֆէնդին հեռագիրներով է հաղորդել «Ժամանակ»-ին: Կովկասի, մանաւանդ Թիֆլիսի հայ հասարակութիւնը զարմանքով պիտի կարդայ այնպիսի լուրեր, որոնց մասին նոյնիսկ «Հօրիզօնը», որ արձագանք է եղել միշտ կաթող. հարցում Երուանդ էֆէնդիներին, ոչինչ չէ լսել և չէ տպել: «Ժամանակ» թերթի դեկտեմբ. 12-ի համարում տպված է «Ծանրակշիռ կացութիւն» վերնագրի ներքոյ հետևեալ հեռագիրը.

Էջմիածին, 11/24 դեկտ., կիրակի գիշ. ժ. 4.40

(Օդեսայի ճամբով)

Միւս կուսակցութիւնը բողոքեց Փոխարքային և ներքին գործոց մինիստրին թէ ինտրիգներ կը սարքուին ընտրութեան մէջ. բողոքը մնաց անհետևանք:

Երուանդ

Ռուսաստանի հայերին քաջ յայտնի է, որ Էջմիածնում ժողովված օրմանեանական պատգամաւորները ոչ մի բողոք, ոչ մի հեռագիր չեն ուղարկել ոչ Փոխարքային, ոչ ևս ներքին գործերի մինիստրին: Նրանց տուած միակ բողոքը՝ ապօրինի գործողութիւնների դէմ, եղել է ընտրողական ժողովին, որ նոյնիսկ այդ բողոքը չէ մտցրել պաշտօնական արձանագրութեան մէջ և Ս. Ցարութիւնեանի ջանքերով, կցել է միայն գործին՝ անհետևանք թողնելով:

Մի այլ հեռագիր, տպված՝ թերթի դեկտ. 15-ի համարում, յայտնում է, որ օրմանեանականների բողոքը ռուսաց սինօդը (կամենում է ասել՝ սենատը) մերժել է:

Երրորդ հեռագիրը, ուղարկված Թիֆլիսից դեկտ. 20-ին, ասում է.

Թիֆլիս, 20 դեկտ.

Կովկասի Փոխարքան յայտարարեց, որ թէ Գէորգ արքեպիսկ. Սուրէնեանցը և թէ Եղիշէ արքեպիսկ. Դուրեանը, երկուքն ալ հաւասարապէս ազգին ձայնովը ընտրուած կը նկատէ ինքը: Երուանդ

Զարմանալի չէ, որ մենք՝ Թիֆլիսի հայերս և հայ լրագիրները այնպիսի բան չը լսեցին և չը տպագրեցին, բայց Երուանդ էֆէնդին միայն լսել է: Հետաքրքրական է իմանալ՝ ումից:

Բայց գլուխ գործոցը հետևեալ հեռագիրն է.

Թիֆլիս, 2 յունվարի

Այսօր Թիֆլիսի վաճառականական քլիւբին մէջ մեծ հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ Թիւրքահայ պատգամաւորներուն: Գրեթէ Թիֆլիսի ամբողջ աչքի զարնող դասակարգը ներկայ էր. գրական անձինք, բանաստեղծներ, հրապարակագիրներ, վաճառականներ: Եղբայրակցութեան այս սեղանին վրայ պաշտօն յանձնուեցաւ ինձ «Ժամանակի» միջոցաւ կովկասահայոց ջերմագին բարևները հաղորդել իրենց Թիւրքահայ եղբայրներուն: Երուանդ

Մի խումբ հօրիզօնականներ, նախաձեռնութեամբ «համբաւաւոր բժշկապետ» Ն. Կաճկաճեանի, ճաշկերոյթ են տուել մի խումբ Թիւրքահայերի, և ահա դուրս է եկել, որ Թիֆլիսի գրեթէ ամբողջ հայ հասարակութիւնը, նոյնիսկ վաճառականները ներկայ են եղել: Եւ նրանք ուրիշ մարդ չեն գտել, եթէ ոչ Երուանդ էֆէնդիին և նրան պաշտօն տուել ամբողջ կովկասահայոց ջերմագին բարևները հաղորդել Թիւրքահայ եղբայրներին: Գոնէ այդ միսսիան յանձնէին ազգային ժողովի ներկայացուցիչ Զիֆթէ-Սարաֆին (երևի նրան մոռացել էին հրաւիրելու):

Խեղճ կովկասահայեր, որ առաջին անգամ պէտք է իմանաք, թէ ձեր անունով շանտաժիստ Երուանդ էֆէնդին ձեր ջերմագին բարևներն է հաղորդել Թիւրքիայի հայութեան:

Մեր առաջ բերած քաղուածները բաւական են բնորոշելու, թէ Երուանդ էֆէնդիին և թէ «Ժամանակ» թերթին:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Յետադիմութեան նշաններ

Մերվ, 16 յունվարի

Հասարակական մտքի ըէակցիան իր աւերիչ դերն է խաղում նաև Մերվի հայ հասարակութեան կեանքում: Հիասթափութիւն, անտարբերութիւն և անշարժութիւն:

Մի ժամանակ Մերվը իր միահամուռ ոյժերի գործունէութեամբ մի շարք կրթական-կուլտուրական խնդիրներում մրցում էր Ասխաբադի հետ. երկրիս հայկական գաղութների շարքում մի ժամանակ իր պատուաւոր տեղն էր գրաւում: Կանանց Բարեգ. Ընկ. մանկական պարտէզը, գրընթերցարանը, դրամատիկական խումբը մի-մի ապացոյցներ էին այդ փայլուն շրջանի:

Դպրոցն այս տարի 600 ր. դեֆիցիտ ունի. հարկաւոր է աշխատանք՝ ապագայ պարտքերից ազատելու համար: Հոգաբարձական և մանկավարժական խառն ժողովը որոշում է գէթ ներկայացումների միջոցով հայթայթել այդ գումարը, դիմում է անուանապէս գոյութիւն ունեցող դրամատ. վարչութեան. մէկ-մէկ ուսերը թոթվելով յետ են կանգնում: Ուսուցիչները ցանկանում են իրանք կազմակերպել մի ներկայացում. դիմում են կանացի ոյժերին, որոնք մերժում են, քանի որ իրանց ամուսինները չեն մասնակցում: Երկար դիմումներից յետոյ վճռում են... դպրոցի սաներից պատրաստել ներկայացում:

Սոյնաման գործերից գլխաւորապէս խոյս են տալիս երէկվայ մեր կարմիր ծիրանի հագած «իդէալիստները», որոնք իբր թէ իրանց «բաժինը կատարել-վերջացրել են»:

Կոկանդի մի բուռն ժողովուրդը ուսումը դարձրել է ձրի, երեկոյթներ է կազմակերպում 1000 ր. զուտ արդիւնք վերցնելով. իսկ 400 տուն ունեցող Մերվը մեծերից սիրողներ չը գտնելու պատճառով՝ մանուկներ է բեմ հանում: Այս երևոյթը մեր յետամնացութեան նշաններից մէկը չէ՞:

Ինչո՞ւ ոսկէ ժամանակները վատնել թըղթախաղի, լօտօյի սեղանի առաջ, անտեղի ասէ-կօսէներով զբաղվել և միևնոյն ժամանակ փախուստ տալ հանրօգուտ գործերից:

Գոնէ բարի նախանձ զգային փոքրիկ Կոկանդից և կենդանութեան նշաններ ցոյց տային. թէ չէ՝ այս ո՞ւր ենք գնում:

Sero

Ուշացած տօնածառ

Դուշէթ, 22 յունվարի

Ամսիս 21-ին, այստեղի հայոց եկ.-ծխ. դպրոցի աշակերտ-աշակերտուհիների համար, Կ. Հ. Բ. Ընկերութեան տեղական ճիւղի նախագահ Ցաւիկ ք. Ապրիլեանի նախաձեռնութեամբ սարքվեց տօնածառ: Բացի աշակերտութիւնից ներկայ էին դպրոցի հոգաբարձուները և պատուաւոր հիւրեր: Աշակերտուհիները հ. Ապրիլեանի և օրիորդ Կակալեանի ղեկավարութեամբ տուին երկու մանկական ներկայացում (մէկը հայերէն և միւսը վրացերէն), երգեցին հայերէն երգեր, արտասանեցին հայերէն լեզուով ընտիր բանաստեղծութիւններ, ինչպէս և ռուսերէն լեզուով: Զօրեղ տպաւորութիւն թողեց Ռ. Պատկանեանի «Մայր Արաքսին» և Ծատուրեանի «Այ սև ամպերը». ներկայ եղողները բազմիցս ծափահարեցին: Տօնածառից յետոյ ցոյց տրվեցին խրատական և ծիծաղաշարժ բովանդակութեամբ մոգական պատկերներ: Նուագում էին Ս. և Ս. Բարաթեանները կիտար և մանդոլինա: Հանդէսը շատ ուրախ տպաւորութիւն թողեց բոլորի վրայ:

Գր. Ապրիլեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 25 յունվարի

Նախագահում է Րոդզեանկօն:

Քննվում են մի շարք հարցապնդումներ:

Հօկտեմբերեանները առաջարկում են հետևեալ բանաձևը Օդեսայի գեներալ-նահանգապետ Տօլմաչէվի ապօրինի գործողութիւնների վերաբերմամբ. «Ուշադրութեան առնելով, որ Պետական Դումայի ընտրութիւնների կատարման ժամանակ Օդեսայում քաղաքապետ Տօլմաչէվը թոյլ տուեց մի շարք ապօրինի գործողութիւններ, որոնք խախտեցին ընտրութիւնների ազատութիւնը և որ այդ գործողութիւնների անօրինաչափութիւնը ճանաչված է ներքին գործերի մինիստրի օգնականի բացատրութիւններով, Դուման մատնանշում է՝ թէ անհրաժեշտ է, որպէսզի կենտրոնական իշխանութիւնը այսուհետև իր ժամանակին միջոցներ ձեռք առնէ խափանելու տեղական իշխանութիւնների գործակալների ապօրինի գործողութիւնները, որոնք խանգարում են Դումայի ընտրութիւնների օրինական ու կանոնաւոր ընթացքը, և անցնում է հերթական գործերին»:

Կարդացվում է հօկտեմբերեանների հերթական հարցապնդումը յանուն ներքին գործերի մինիստրի այն առիթով, որ իշխանութեան ներկայացուցիչները Պետերբուրգի և Մոսկվայի լրագիրների խմբագրութիւններից պահանջել են ոչինչ չը գրել Գրիգորիյ Րասպուտինի մասին, ըստ որում այդ պահանջից զանց առնելը առաջ է բերում խմբագիրների պատասխանատուութիւն ու համարների գրաւում:

Գուչկովի և Լվօվ 2-րդի ճառերից յետոյ, որոնք խնդրում են Դումայից ընդունել հարցապնդումը, Պետական Դուման ձայների մեծամասնութեամբ՝ բարօն Չերկասօվի ձայնի դէմ՝ ընդունում է հարցապնդումը:

Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչ Նիկօլակին բացատրութիւններ է տալիս Շօրապանի գաւառի կովկասեան իշխանութիւնների ապօրինի գործողութիւնների մասին ներկայացված հարցապնդման առիթով: Պաշտօնական փաստերի հիման վրա Նիկօլակին վկայում է, որ ինչպէս բարձր, այնպէս և նահանգական իշխանութեան գործողութիւնների մէջ ոչ մի ապօրինութիւն չը կայ:

Կառավարութեան բացատրութիւնները յետաձգվում են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի քաղաքագլուխը յանձնարարել է քաղաքային վիճակագրական բիւրօյի կառավարչին քաղաքային վարչութեանը ներկայացնել նախապատրաստական աշխատանքների նախագիծ և պահանջվող գումարի նախահաշիւ Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների համար: Քաղաքային վարչութիւնը այդ նպատակի համար իր տրամադրութեան տակ ունի 10,000 ր. գումար:

◆ Ուսումնարանական վարչութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ մօտ ապագայում տեղի կունենայ մի խորհրդակցութիւն Կովկասում ծառատնկութեան հանդէսներ կազմակերպելու համար:

◆ Կովկասի Կանանց Ընկերութեան խորհրդին թոյլատրված է Թիֆլիսում հիմնել գրադարան:

◆ Ներկայ տարվայ մարտի 1-ին լրանում է Թիֆլիսի քաղաքային գրատան գոյութեան 25-ամեակը: Ռուսաստանում գոյութիւն ունեցող գրատներից Թիֆլիսի գրատունը ամենահինն է:

◆ Զուբալօվեան Ժողովրդական Տանը հայ դրամատիկ թատերասէրների խումբը այսօր, յունվարի 27-ին, կը ներկայացնէ «Կեանքի խնջոյքում» 4 գործ. դրաման, հեղ. Ալէքսանդրօվի:

◆ Յունվարի 25-ի երեկոյեան ժամը 9-ից յետոյ 9-րդ քաղաքամասի փուռներից և ոչ մէկում հաց չը կար, որովհետև, քաղաքային վարչութեան կարգադրութեամբ, սանիտարական պակասութիւնները վերացնելու համար փակված էին բոլոր փուռերը, որով ազգաբնակութիւնը փաստօրէն մնացել էր առանց հացի: Ցանկալի էր, որ քաղաքային վարչութիւնը, նախ քան այսօրինակ կարգադրութիւն անելը, դեռ հոգար այն մասին, որպէսզի փուռերի փակված ժամանակ քաղաքի բնակիչները չը մնային առանց հացի:

◆ Թիֆլիսում Բրիւսսէլից տեղեկութիւն է ստացվել, որ այնտեղ կազմվել է մի խոշոր ընկերութիւն, որը նպատակ ունի շահագործել Կովկասի լեռների հանքերը: Ընկերութիւնը մասնաւորապէս շահագրգռված է քարածուխով, ինֆուզօրային հողով և ծառերով:

◆ Դուշէթի գաւառի Ղազիբէգ և Սնօ գիւղերում 12 տարուց ի վեր ինժ. Վասիլևի հետախուզութեանց շնորհիւ երևան են հանված հանքեր պարունակող բլուրներ, որոնք պարունակում են իրանց մէջ ծառը (сурьма, antimoine), պղինձ, նիկել և գրաֆիտ:

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է, որպէսզի կիրակի և տօն օրերը Դվօրցօվայա փողոցի և Գօլօվինսկի պրօսպէկտի վրա երթևեկութեան ժամանակ կարգապահութիւն լինի, հերթապահութիւն անեն թաղական ոստիկանները: Նոյնպէս կարգապահութիւն կը սահմանվի Միքայէլեան փողոցի վրա:

◆ Երէկ, յունվարի 26-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի I քրէական բաժանմունքը քննեց Հ. Առաքելեանի դէմ Վարդան քահ. Տէր-Ղևոնդեանի կողմից յարուցած դիֆֆամացիայի դատը: Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի նահանգական դատարանը, որ քննեց այդ գործը, ենթարկեց Հ. Առաքելեանին 200 ր. տուգանքի, բայց Վարդան քահանայի պահանջը՝ 240 ր. ստանալ նրանից իր օգտին, մերժել էր: Ցայտնի է, որ դիֆֆամացիայի ժամանակ առհասարակ շատ դժուար է արդարանալ, որովհետև այդ ժամանակ վկաների ցուցմունքները չեն ընդունվում, այլ պէտք է ներկայացնել միայն պաշտօնական դօկումենտներ: Եւ այն անձինք, որոնք իրանց զրպարտված են զգում մամուլի մէջ, դիմում են ոչ թէ դիֆֆամացիայի դատի, այլ ամբաստանում են իրանց մեղադրողին զրպարտութեան մէջ: Դատաստանական պալատը հաստատեց նահանգական դատարանի որոշումը: Հ. Առաքելեան մտադիր է գործը անցկացնել սենատ:

◆ Յունվարի 24-ին ոստիկաններից մէկը ձերբակալեց Մենդել Ֆիլդմանին, որը կասկածվում է այն յանցագործութեան մէջ, որպէս թէ Դիտեատկօվսկի ընկերութեան թղթապահեստից պարբերաբար յափշտակել է զանազան ապրանքներ: Յանցագործութեան մէջ նրան գործակիցն է եղել նոյն թղթապահեստի ծառայող Նիկօլայ Կուրբատօվը: Ցիշեալ երկու հոգին ևս ձերբակալված են:

◆ Յունվարի 25-ին, երեկ. ժ. $8^1/_2$-ին, Բաղեզժայա և Ելիզավետինսկայա փողոցների անկիւնի № 11/2 տանը ապրող առաջին կարգի վաճառական Բեալբալայ Բաշիր Հաջի-Աբդուրահման-օղլի-Հիւսէյնօվի բնակարանից անյայտ չարագործները յափշտակել են 3200 րուբլի կանխիկ դրամ և 4790 րուբլու արժեթղթեր: Կասկածով ձերբակալված են երկու մահմեդական:

◆ Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ բժ. Մ. Քանանեանը ուղարկված է Քութայիսի նահանգը՝ ընկեցիկների խնամակալութեան գործի հետ ծանօթանալու համար:

◆ Երևանում, Ջանփօլադեանների թատրոնում, յունվարի 28-ին, Թիֆլիսի մի քանի դասախօսներ կազմակերպում են գրական դատավարութիւն: Դատվելու է Լ. Տօլստոյի «Կենդանի դիակի» հերոս Ֆեօդոր Պրոտասօվը: Պաշտպանելու են Պալը և իրաւաբան Մօրդանիա: Սկիզբը 8 ժամին:

◆ Բագուի նահանգական ատեանը վերջնականապէս փակեց բանւորական ակումբը և «Нуха» ընկերութիւնը:

◆ Միլլիոնատէր Ջիլլևվի կտակակատարները 130,000 րուբլի գումար նուիրեցին Բագուի մահմեդականների դպրոցների օգտին:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Էսքիզներ» (1) Ճերմակ շուշանը, 2) Իմ փէյզը և 3) Հինգ կօպէկ), Արգար Պայազատ, գինը 15 կ.:

Երեք փոքրիկ պատմուածքներ են զետեղված յիշեալ գրքոյկի մէջ: Առաջինը շօշափում է այն հարցը, թէ ի՞նչ վախճան է ունենում այլասեր դասակարգերի ներկայացուցիչների միջև առաջ եկող սէրը: Կարօն, խեղճ մշակ Կարօն սիրում է իր աղայի աղջկան, որին «Ճերմակ շուշան» է անուանում: Տանջվելով ինքն իրան մաշում է, և 20-ամեայ, Հերքուլեսի նմանող Կարօն չը կարողանալով հասնել իր մուրազին՝ ինքն իրան գցում է մի բարձր պատուհանից աղայի պարտէզը և շնչասպառ ընկնում «Ճերմակ շուշանի» ոտքերի տակ ու վերջին շունչը փչելուց առաջ, ճիգ է անում, բռնում է օրիորդի ձեռքը, մօտեցնում է դողացող շրթունքներին և հազիւ թէ մի համբոյր դրոշմելով՝ աւանդում է հոգին:

«Ճերմակ շուշանը» բաւական սրտաշարժ մի նկարագրութիւն է և աջող կերպով պատկերացնում է սիրահարված մշակ պատանու սիրոյ զեղումներն ու ելևէջները, նրա ինքնատեսակ հոգեբանութեամբ հանդերձ:

«Իմ փէյզը» ֆանտաստիկ մի գրուածք է: Երևում է, որ նրա հեղինակի ֆանտազիան բաւական հարուստ է և բազմատեսակ: Նա կարողանում է բաւական գունեղ կերպով պատկերացնել զգացումներն ու հոգեկան վերապրումները:

«Հինգ կօպէկը» ռէալ կեանքից վերցված à la Գօրկի գրված մի պատկեր է մի հայ «նախկին մարդու» կեանքից:

Ա. Պայազատը հարազատ գծերով և շատ ռելիեֆ գոյներով նկարագրում է յետին աստիճան ընկած մարդու ապրումները, նրա կրած զրկանքներն ու անկման այլևայլ պատճառները և ի վերջոյ այդպիսի կեանքի վախճանը, ապօթէօզը:

Նկատելի է, որ հեղինակը դիտելու, պատկերացնելու և աջող կերպով նկարագրելու ընդունակութիւնից զուրկ չէ:

Խորհուրդ կը տանք նրան լուրջ ուշադրութիւն դարձնել լեզուի վրա, որը մասամբ կաղում է: Հայոց լեզուն բաւական ճոխ բառարան ունի, հետևաբար և առատ կերպով կարելի է նրանից օգտվել և աւելի հարուստ լեզուով նկարագրութիւններ տալ, մանաւանդ ֆանտաստիկ գրուածքների մէջ:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՍԱՄՍՈՆ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ

Գեօկչայ, 22 յունվարի

Երկար բացակայութիւնից գալով Գեօկչայ, կարդացի «Հօրիզօն» լրագրի № 3-ում և «Մշակի» № 4-ում ձեր «երկու խօսքով» գրած պատասխանը իմ ձեր հասցէին ուղղած և «Մշակի» № 290-ում (1911 թ.) տպված բաց նամակի առիթով:

Պատասխանելով Հ. Առաքելեանի «Տպաւորութիւններ» վերնագիրը կրող յօդուածներին, դուք ձեր այդ «հերքում» պատասխանի վերջում աւելացնում էք, թէ, օգտվելով դէպքից, հարկաւոր էք համարում մի «երկու խօսքով» պատասխանել իմ գրած բաց նամակին, բայց խուսափելով ուղղակի և պարզ կերպով մօտենալու այն հարցին, թէ ինչո՞ւ առհասարակ մի քանի ժամանակներից ի վեր սկսել էք երևալ առաջներում ձեր չը սիրած թայֆայականների շարքերում, որի համար էլ վարձատրըվեցիք նախագահ ընտրվելու պատւով «համազգային» ժողովում—որը միայն Աստուած համազգային ընտրված ժողով համարէ—ասում էք, թէ կաթողիկոսական ընտրութեան գործում դուք Օրմանեան սրբազանի նկատմամբ՝ իբրև թեկնածուի՝ վարվել էք ձեր խորին անձնական համոզմունքով, որը «կազմել էք»՝ ձեռքի տակ ունենալով «զանազան աղբիւրներից» ստացած տեղեկութիւններ և ի միջի այլոց ի նկատի էք առել հանգուցեալ Խրիմեան և Իզմիրլեան կաթողիկոսների «հեղինակաւոր» (և ոչ աղէտաբեր) կարծիքներն և այն բացատրութիւններն ու փաստերը, որ տուել են ձեզ Թիւրքիայից՝ բուն երկրից՝ եկած պատգամաւորները (յամենայն դէպս ոչ նոր և ոչ աւել, քան կայ Օրմանեանի ամբաստանութեան հռչակաւոր գործում), և յետոյ ձեր «երկու խօսքով» գրած պատասխանը վերջացնում էք խրատ կարդալով մեզ-պէս անխրատների գլխին, թէ պէտք է յարգանք ունենալ դէպի ուրիշների կարծիքը և համոզմունքը (երևի այն չափով, որքան դուք և ընկ. ունեցաք դէպի փոքրամասնութեան կարծիքը և համոզմունքը), թէ Օրմանեանը կաթողիկոս ընտրելու հարցի վրա պէտք է նայել «սկզբունքի և ուղղութեան» տեսակէտից...

Կարդալով ձեր պատասխանը, ես յիշեցի մեր հարևան պարսիկների կեանքից մի յայտնի առած, որը ասում է, թէ «Աւազըն եախշի գէալըր, օխուդըղըն Կուրան օլա», այսինքն թէ՝ ձայնդ լաւ է գալիս, եթէ կարդացածդ Ղուրան լինի: Շատ լաւ էք խօսում համոզմունքից, սկզբունքից, ուղղութիւնից և այլն, բայց, յարգելի Սամսոն Ստեփանովի՛չ, հէնց բանն էլ նրանումն է, որ ձեր բռնած ընթացքի մէջ դէպի կաթողիկոսական հարցը և մասնաւորապէս դէպի Օրմանեան սրբազանը չեն երևում ոչ համոզմունք, խիղճ, փաստեր և ոչ սկզբունք ու ուղղութիւն:

Մի ամբողջ տարի է, ինչ դուք և ձեր մտերիմ բարեկամ մագիստրոս սրբազանը, որը այս վերջին տարում իր Թիֆլիս եղած ժամանակ օրերի մեծ մասը անց է կացրել ձեր կաբինէտումը, խոհեր էք խորհում և ճիգեր էք թափում նրան իրան բազմեցնելու Լուսաւորչի գահին: Համոզմունքի սիրահար պ. իրաւաբան, ինչո՞ւ չէք բացատրում հայ հասարակութեանը, թէ դուք ի՞նչպէս էք կազմել այդ խորին համոզմունքը, որ ձեր բարեկամը արժանի է բազմելու կաթողիկոսական գահին, իսկ բազմակողմանի կրթված, վարչագէտ, քաղաքագէտ Օրմանեանը անյարմար է ձեր և ընկ. կարծիքով՝ կաթողիկոսութեան համար «սկզբունքի և ուղղութեան» տեսակէտից»: Չէ՞ որ բազմաթիւ վրդովված ռուսահայերին հարկաւոր են փաստեր և ոչ լոկ ու թեթև ձևով ծածկված խօսքեր, ճոռոմ ֆրազներ:

Դուք ասում էք, որ շատ ջանքեր էք արել համաձայնեցնելու մեծամասնութիւնը փոքրամասնութեան հետ և նոյնիսկ առաջարկել էք ձեր դաշնակիցներին Օրմանեան սրբազանի անունը մտցնել քառանուն ցանկի մէջ, բայց այդ ձեզ չէ աջողվել (ամակդ Երուսաղէմ): Մենք, Սամսոն Ստեփանովի՛չ, ամենքս ասիացիներ ենք և իբրև այդպիսիներ միմեանց լաւ ենք հասկանում և գիտենք, որ ասիացիներիս մէջ այլ է խօսքը, այլ է գործը, որովհետև մեր ասիացիներիս մէջ լեզուի և հոգու միջև մէկ տուժին մեծ-մեծ սարեր և ձորեր են ընկած, այնպէս որ կարծեմ շատերի համար պարզ է, թէ ի՞նչ չափով էք «ջանքեր» գործադրել այդպիսի մի համաձայնութիւն ձեռք բերելու համար. բայց կարևորագոյնը այն է, որ ձեր այդ ջանքերի արանքում ասում են, դուք մի ճառ էք արտասանել Մայր Տաճարում 28 բողոքողների հեռանալուց յետոյ և, ասում են, օրինաւոր էք գտել իրաւաբանօրէն կայացնել ընտրութիւնը, առանց որևէ ուշադրութիւն դարձնելու բողոքողների հեռանալու վրա. իբրև իրաւաբան և յետոյ ատենապետ, որքան էք կատարում ձեր ուրիշների գլխին կարդացած խրատը՝ յարգել ուրիշների կարծիքը և համոզմունքը, և ճրքան փաստեր, խիղճ, համոզմունք, ուղղութիւն կան ձեր ասածների մէջ. բաւական է հէնց վերցնել ձեր ասածները Թիֆլիսում պատուիրակային ժողովում և դէպի ձեզ այդքան զգոյշ և քնքոյշ վերաբերվող Աստրախանի պատգամաւոր Սաթունեանի գրածը (տես «Մշակ» № 12) և այդ մի քանի խօսքերից համոզվել, որ դուք հէնց այդպէս պէտք էր վերաբերվէիք Էջմիածնում դէպի փոքրամասնութիւնը, դէպի կաթողիկոսական ընտրութիւնը և այլն։

Պատուիրակային ժողովում դուք ասացիք. «Կը գան Թիւրքիայից թարմ ույժերը, և մենք այնտեղ կը խօսենք»։ Այդ թարմ ույժերը եկան և մենք տեսանք, որ, քիչ բացառութեամբ, ձեր ակնկալած թարմ ույժերի փաստերը այնքան արժէք ունեն, որքան մեր թարմ լօքօ ձկան երեք փունտ թարմ միսը։ Իսկ Սաթունեանը ասում է. «Ըստ իս, եթէ Ս. Յարութիւնեանը իր բոլոր բարոյական ազդեցութիւնը գործ դնէր, շատ հաւանական է, որ համաձայնութիւն կայանար. Նա (այսինքն դուք) բաւականին անտարբեր էր, բայց ոչ դատապարտելի անտարբեր (այլ գովասանքի արժանի), այլ նկատելի անտարբեր». «Ես միայն,—աւելացնում է Սաթունեանը,—դժգոհել եմ, որ նա (այսինքն դուք) չօգտվեց բարոյական ազդեցութիւնից» («Մշակ» № 12)։

Մինչև հիմա Օրմանեանի դէմ կուտակված փաստերը դուրս եկան չինծու, արհեստական և հինգ ղրուշի արժէք չունեցող. եթէ դուք նոր գիւտեր էք արել այդ մասում և ձեզ ձեր սրտակից, համախոհ բարեկամները «զանազան աղբիւրներից» զինել են նոր ծանրակշիռ փաստերով Օրմանեանի դէմ, ինչու չէք այդ թանգարժէք փաստերը դնում հասարակութեան առաջ, որպէս զի Օրմանեանին համակրողները հիասթափվեն և ձեզ-պէս դառնան մագիստրոսական։

Մենք ասում ենք, թէ գօլիցինեան րէժիմը անտանելի էր և նրա քաղաքականութիւնը սխալ և զուրկ՝ հեռատեսութիւնից, բայց յետոյ վեր ենք կենում և գովաբանում նրա կարծիքները և համարում հեղինակաւոր։ Այդ միթէ բնական է։ Ճիշդ այդպէս էք վարվում դուք կաթողիկոսական խնդրում. Մեր երկու աշխատաբեր կաթողիկոսների՝ Խրիմեանի և Իզմիրլեանի «հեղինակաւոր» կարծիքներից դուք նոր կանոն էք կազմում և փաթաթում ազգի շլինքին։

Այժմ հայ հասարակութեան զանազան խաւերը, օրինակ՝ մինչև այժմ անտարբեր հանդիսացած վաճառականութիւնը և գիտակից ինտելիգենցիայի մեծագոյն մասը, արդէն գլուխ են բարձրացրել պաշտպանելու այսուհետև իրանց իրաւունքները։

Լեոն Վարազեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Անգլիացի մի խումբ քաղաքական յայտնի գործիչներ սուլթանին և երկու պալատների նախագահներին ուղարկեցին մի յուշագիր, որի մէջ նրա հեղինակները իրանց վրա են վերցնում պետութեան զանազան ճրնշված ժողովուրդների պաշտպանութիւնը. Յեղաշրջման ժամանակ երիտասարդ թիւրքերը խոստացան այդ ժողովուրդներին հաւասար իրաւունքներ ու ազատութիւն։ Այժմ, երեք տարի անցած, այդ խոստումները դեռ կատարված չեն։ Այդ հանգամանքը կարող է պետութեան անկման պատճառ դառնալ, ցրել այն համակրանքները, որ ներկայումս բրիտանացիք տածում են դէպի երիտասարդ թիւրքերը։ Ստորագրողների թւում են լորդեր Ուէբրդել, Կաուրտնէյ, Պիլ և Էշէր, չորս եպիսկոպոս, Լօնդօնի և Էդինբուրգի քաղաքագլուխները, շատ պրոֆեսորներ և պարլամենտի անդամներ։

◆ Բօլգարական դեսպան Սարաֆովը Բ. Դրան առաջ բողոքեց Մակեդոնիայում բնակվող բօլգարների դէմ հալածանքների և սպանութիւնների առիթով։

◆ Եմենում շէյխ Իմամ Իդրիսը, օգտվելով խառնակ ժամանակից, ապստամբվել է և սկսել է կռւել ընդդէմ Թիւրքիայի։ Արաբական մամուլը յարձակվում է ապստամբ շէյխի վրա։

◆ Կ. Պօլսում վերսկսվեցին անգլօ-թիւրքական բանակցութիւնները Բաղդադի երկաթուղագծի վախճանական կէտի կառուցման մասին։

◆ Կ. Պօլսում հրատարակվող պաշտօնական «Թանինի» խմբագիր Ջաւիդ-բէյը դիֆամացիայի համար ենթարկվեց թիւրքական 10,000 փունտ տուգանքի։

◆ Կ. Պօլսում սկսվել են օպպօզիցիայի նախկին պատգամաւորների ձերբակալութիւնները։

◆ Թէհրանում քաղաքական գործիչների մէջ տեղի են ունենում գաղտնի ժողովներ։ Յամառ կերպով Թէհրանում խօսում են, որ Անգլիան և Ռուսաստանը արդէն նոր նօտա են ուղարկել պարսից կառավարութեանը։

◆ Օդեսսայում էկս-շահի կինը և մերձաւորները ստացել են ուրախալի հեռագիրներ Մահմէդ-Ալիի ապագայ ձեռնարկութիւնների մասին։ Էկս-շահը հաղորդում է, որ իր կողմնակիցների թիւը օրէ-ցօր աճում է և նրա գործը ապահովված է։ Վերջում Մահմէդ-Ալին իր կնոջը ուրախացնում է, որ շուտով կը տեսնվեն իրար հետ, բայց արդեօք Թէհրանում թէ Օդեսսայում,—այդ մասին խոհեմաբար լռութիւն է պահում Իրանի նախկին կառավարիչը...

◆ Ռուսաց զինուորա-դաշտային դատարանը Թաւրիզում նորից կախեց երկու յեղափոխականի և Բաշտում՝ հինգ յեղափոխականի։

◆ Ղազվինում ռուսաց իշխանութիւնները կատարում են խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։ Ձերբակալված է դեմօկրատների պարագլուխ Նաիբ-Զադէն։

◆ Թաւրիզում ռուսները 16,000 րուբլով վաճառեցին Սաթթար և Բաղըր-խանների յարքունիս գրաւած գոյքերը։ Փողերը բաժանվեցին անկարգութիւնների ժամանակ վնասված օտարազգիներին։

◆ Կալանաւորվեց և Պետերբուրգ տարվեց Կիևի պահնորդական բաժանմունքի նախկին պետ Կուլեաբկօն։

◆ Գերմանական րէյխստագի նախագահի պաշտօնի համար սօցիալ-դեմօկրատներն աշխատում են իրանց թեկնածուին ընտրել տալ։

◆ Գերմանիան իր նաւատորմի պաշտօնեաների թիւը աւելացնում է 15,000 մարդով։ Այնուհետև նրանց թիւը լինելու է 80,000։

◆ Գերմանական զօրքի և նաւատորմի ուժեղացման ծախքերը ծածկելու համար կանցլերը բուրժուական կուսակցութիւնների լիդերներից պահանջում է 100 միլիօն մարկ ամեն տարի։

◆ Գերմանական քաղաքական շրջաններում պտտվում է սենսացիօն լուր, թէ իբր արքիդուքս Ֆրանց-Ֆերդինանդը աշխատում է վերականգնել եռապետական դաշնակցութիւնը։ Իտալիան ի միջի այլոց պարտաւորվելու է Անգլիայի և Ֆրանսիայի ընդհարման դէպքում զինված աջակցութիւն ցոյց տալ Աւստրիային և Գերմանիային։

◆ Մանջուրիա կայարանում շարունակ ժողովվում են մօնղօլական զօրագնդեր։ Խաղաղ բանակցութիւնները արդէն խզված են չինական զօրաբանակի հետ։ Ամեն օր տեղի են ունենում մանր կռիւներ։ Սակայն խոշոր բարդութիւններն անխուսափելի են։

◆ Մօնղօլական զօրագնդերը գրոհ տուին Լուբինֆու քաղաքի վրա։ Կռիւը շարունակվում է։

◆ Չին-մօնղօլական վերջին օրերի ընդհարումների ժամանակ սպանվեց մի ռուս օֆիցեր և վիրաւորվեցին 6 ռուս զինուոր ևս։

◆ Մանջուրիայի փոխարքան տեղեկացրեց Ցիցիկարի նահանգապետին, որ նա կենթարկվի պատերազմական դատարանի, եթէ՝ ինչ միջոցով էլոր լինի՝ չը ճնշէ մօնղօլական ապստամբութիւնը։

◆ Իւանշիկայը կայսրուհուն զեկուցեց, որ զօրքը անյուսալի է։ Կարծում են, որ այդ զեկուցումն էլ ստիպել է կայսրուհուն ստորագրել կայսերական գերդաստանի՝ գահից հրաժարվելու հրովարտակը։

◆ Գահից հրաժարվելու հրովարտակը գտնվում է Իւանշիկայի մօտ, որ չէ հրատարակում այն՝ սպասելով կարգ ու կանոնը մայրաքաղաքում պաշտպանելու կարգված զօրամասի գալըստեան։ Այն համոզմունքն է տիրում, որ հրովարտակի հրատարակութեան ժամից իսկ մայրաքաղաքում բռնկվելու են չը տեսնված անկարգութիւններ։

◆ Պէկինը համարեա դատարկվել է կայսերական տան պրինցներից, բարձրաստիճան պալատականներից և ազգաբնակութեան մի մասից։ Պաշտօնեաները ծառայութեան չեն գնում։

◆ Հարաւից և Հիւսիսից չին յեղափոխական գնդերը մօտենում են Պէկինին։ Յեղափոխականների մի մեծ զօրաբանակ ևս դիմում է դէպի Մուկդէն։

◆ Խունխուզները շարունակ զինվում են և գաղտնի կերպով կենտրոնանում են պայմանական տեղում։ Չինական կառավարութիւնը նրանց դէմ զօրքեր է ուղարկում Մուկդէնից։ Սպասվում են ընդհարումներ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

25 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Бирж. Вѣд.» երկրորդ հրատարակութիւնը գրաւվեց։ Խմբագիրն ենթարկվում է պատասխանատուութեան։

Սենատը հաստատեց Օդեսսայի դատաստանական պալատի վճռի համաձայն միլիօնատէր Վարտիկի ժառանգ Դմիտրի Վարտիկի իրաւունքները։

«Рус. Знамя»-ի խմբագիր Դուբրովինը դատապարտվեց 10 օրով բանտարկութեան 1,034-րդ յօդուածով, 50 րուբլի տուգանքի 1,039-րդ յօդուածով, և եօթ օրով բանտարկութեան բանտում՝ 1,040-րդ յօդուածով։

ՄՈՍԿՎԱ։ Գրաւվեց «Утро Россіи» լրագիրը։ Խմբագիրը ենթարկվում է պատասխանատուութեան 281-րդ յօդուածով։

«Голосъ Москвы»-ի խմբագիրը՝ Նովօսէլովի նամակը տպագրելու համար՝ պատասխանատուութեան է ենթարկվում 1,034-րդ յօդուածով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ
ԱՅՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ

Նեվրաստենիայով, սեռական թուլութեամբ, զառամութեամբ, իստէրիկայով, նեվրալգիայով, սակաւարիւնութեամբ, թոքախտով, սիֆիլիսով, սնդիկային բժշկութեան հետեւանքներով, սրտի հիւանդութիւններով (չաղութիւն, սրտի անդադարութիւն, սրտի բաբախումն, պէրէզօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումով, ալկոհօլիզմով, ողնուղեղի հիւանդութեամբ, կարուածներով, հիւանդութիւններից առաջացած թուլութեամբ, յոգնածութեամբ և այլն։

Օրէ-ցօր ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ շատացող պահանջը առաջ է բերել բազմաթիւ փոքրարժէք և առողջութեան համար վնասակար նմանողութիւններ։ Այդ պատճառով իսկ, մենք պարտք ենք համարում նախազգուշացնել հիւանդներին նմանօրինակ միջոցներից։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ գիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ վերոյիշեալ հիւանդութիւնների վերաբերմամբ ունեցած փայլուն հետեւանքների մասին՝ վերաբերում են բացառապէս ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, դրա համար և հարկաւոր է ուշադրութիւն դարձնել «ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ» անուան վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները միայն նմանողութիւններ են ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, որոնք ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ։ ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ գինը 3 րուբլի է։

Յիշեալ նմանողութիւնների սակաւարժէքութիւնը պարզելու համար հրատարակված է առանձին բրօշիւր, որը ուղարկվում է ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ եղած նոր գրականութեան հետ միասին՝ ըստ առաջին պահանջման։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ՊՐՕՖԵՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում, В. О., 7 лин. 18.
(П. 1265) 12—3
ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Գեղեցկութիւնը բարձր կատարելութեան է հասած։
№ 4711.
ՎԱՐԴԻ ԲՈՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ
երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքուշութիւնը, հարթութիւնը և առաձգականութիւնը, որոնք համարվում են ամենաբարձր գեղեցկութեան իսկական նշանները։ Կտորը 25 կոպ.։ Կայ ամենուրեք։
Ֆերդ. Միւլհենս պարֆիւմէրիա № 4711
Կէօլն-Րէյնի վրա։ Հիմնված 1792 թ.։

PARFUMERIE
№ 4711
F. MÜLHENS

(M. 28759/28782) 8—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9$^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Ջ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ի. Ա. ՖՐԱՆԿ—9—2 ժ. ատամների բուժումն, լցնելը (պլօմբա) և արհեստական ատ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ի. Ա. ՖՐԱՆԿ—5—7 ժ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—8

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տելէֆօն 388.
(չ.ու.կ.) 761. 100—70

ԲԺԻՇԿ
Ց. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտօվսկայա, № 66.
(ա.օ.) 130. 100—66

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. և Մ.
ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլայէվսկայա, № 36.
(ա.օ) 1212. 25—18

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՎԵՐՍԿՍՈՒՄ Է
„ՄԱՄՈՒԼ“
Շաբաթաթերթը
Նոյն խմբագրական կազմով։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
Տարեկան բաժնեգինը
Ռուսաստանում 3 ր., արտասահմանում 4 ր.։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мамулъ“. Tiflis (Russie), Rédaction „Mamoul“.
(ու.կ.ե.) 50. 5—1

Շտապով վաճառվում են
ՁԵՂՋԱԾ ԷԺԱՆ ԳՆՈՎ
10,000,000
Գեղարուեստ. բացիկներ՝ արտասահմ. չքեղ գործ. զատկական, սիրային տեսար., կանացի գլուխներ, լանդշաֆտներ, պէյզաժներ, Տրէտեակովի գալլերէյան, պարիզեան սալօնը և այլ հետաքրք. տեսար.։ Նմուշի համար պօստով ուղարկում ենք 100 հատ՝ 1 ր. 25 կոպէկով. 200 հատը 2 ր. 25 կ., 300 հ. 3 ր. վերադիր վճ.։ Իւրաքանչիւր հարիւրեակը ունի 100 առանձին նկարներ։ Միանգամից մեծ պատուէր տալուց խոշոր զեղջ։ Պատկերազարդ պրէյսկուրանտն ուղարկում ենք պատուէրի հետ միասին։ Հասցէագրել՝ Эксп. дому Художеств. откр. писемъ Зигмунта Розенталя, г. Лодзь, № 21.
(1, 7, 11) (Л. 8) 4—1

Выпущены въ свѣтъ слѣдующіе новые труды
Н. В. АБРААМЯНА
I
Руководство Торговой Бухгалтеріи
въ связи съ нефтепромыш. и керосинозаводскимъ производствомъ по Двойной Италіанской системѣ.
Второе изданіе, дополн. и исправленное
Цѣна 2 р. 50 к.
II
Таблицы вычисленія процентовъ
отъ I до 360 дней, отъ 1 до 12% включ. и на всѣ капиталы отъ 1 до 10,000 руб.
Второе изданіе
Цѣна 85 коп.
III
Общедоступная Справочная Книжка
Для слушателей и слушательницъ Бухгалтерскихъ Курсовъ и занимающихся конторскимъ трудомъ.
Цѣна 30 коп.
Складъ изданій при Бухгалтерскихъ Курсахъ Н. В. АБРААМЯНА въ Тифлисѣ, Николаевская, 22. с. д. Выписывающіе непосредственно изъ склада за наложенный платежъ не платятъ.
(ու. կ. չ.) 30. 10—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
„ՀԱՅ-ԱՆՑԵԱԼԸ“
անունով մեծադիր բարելիեֆը, ձուլված ամենաբարձր տեսակի ալէբաստրից ու ներկված ոսկու կամ արծաթի գոյնով։ Կոտրվելուց ապահովելու համար, ձուլուածքի մէջ թաղված է փայտեայ շրջանակ, վրան հաստ քաթան քաշած։
Բարելիեֆը ներկայացնում է 15 հայ թագաւորների, 5 եկեղեցականների ու ս. Էջմիածնի ուսուցիկ պատկերների խմբանկարը, 18×13×½ վերշոկ մեծութեամբ ու 13—15 փունտ ծանրութեամբ, շրջապատված հայկական ոճի գեղեցիկ շրջանակով։
Ուղարկվում է փայտեայ արկղի մէջ խնամքով ծրարած։
Գինը՝ 10 ր. ճանապարհի և այլ ծախքերով։
Թիֆլիսում 8 րուբ.։
Գեղարուեստօրէն չքեղ ներկված օրինակները 15—25 րուբ. և աւելի արժողութեամբ, ըստ առանձին պատուէրի։
Վերադիր վճարով ուղարկվում է միայն արժէքի կէսը ստանալուց յետոյ։ Մամուլի կարծիքը բարելիեֆի մասին տես. անցեալ 1911 թ. «Մշակ» № №221 և 222, «Հօրիզօն» № 242, և «Սուրհանդակ»։
Դիմել՝ Тифлисъ, Карусельный спускъ, д. № 1, кв. 2, В. С. Демирчоглянцу.
(չ. ու. կ.) 44. 5—2

Ընդ մամլով է եւ շուտով լոյս կը տեսնէ
ՅՈՒՇԱՐՁԱՆ
ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՅ
առթիւ
100-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԻԵՆՆԱ
1811—1911
ԵՒ
25-ԱՄԵԱՅ ՏԱՐԵՇՐՋՄԱՆ
„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ
1887—1911
Հրատարակեալ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ
Մասնակցութեամբ
ԱՇԽԱՏԱԿՑԱՑ «ՀԱՆԴԷՍԻ» ԵՒ ՀԱՅԵՐԷՆԱԳԷՏ ԲԱՆԱՍԻՐԱՑ

«Յուշարձանը»՝ կարևոր և ճոխ բովանդակութեամբ նուիրուած է 50-ամեայ յոբելինաւոր գեր. վեր. Գրիգոր արքեպ. Գովրիկեանի և կը բաղկանայ երկու մասերէ.

1) Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան Միաբանութեան հարիւրամեայ գործունէութեան վրայ, ուր «Հանդիսի» խմբագրութեան կողմանէ համառօտ գծերով կը պատկերանան Միաբանութեան ծնունդն ու յաջորդութիւնը, գրական գործունէութիւնը՝ նշանաւոր գրական գործիչներու ամփոփ կենսագրականներով և լուսանկարներով, տպարանը, մատենադարանը, թանգարանը եւ «Հանդէս Ամսօրեայի» պատմութիւնը՝ խմբագրապետներու կենդանագիրներով։ Ապա հայր Գ. վ. Մէնէվիշեան կը գծէ «Հանդէս Ամսօրեայի կեանքը», հետաքրքրական բովանդակութեամբ։

2) Գրական Ժողովածոյ. այս մասը ամբողջապէս նուիրուած է՝ զուտ մասնագիտական յօդուածներու՝ հայ հին և նոր գրականութեան, հնախօսութեան, եկեղեցական և աշխարհիկ պատմութեան, բանասիրութեան, լեզուագիտութեան, ազգագրութեան, արուեստի և կենսագրականի, «Հանդիսի» ականաւոր գործիչներու և եւրոպացի հայերէնագէտ պրոֆեսորներու ազնիւ մասնակցութեամբ։ Փոքրիկ գաղափար մը կազմելու համար նիւթերու առատութեան, պէսպէսութեան և հետաքրքրական բովանդակութեան՝ յառաջ կը բերենք ուսումնասիրութեանց ցանկը կարգաւ.

ՅՈՒՇԱՐՁԱՆԸ՝ գրեթէ 500 մեծադիր էջ («Հանդիսի» դիրքով)՝ տպագրուած է մաքուր, ողորկ թղթի վրայ՝ տպագրական մեծ խնամօք, զարդարուած գրական ժողովածուի աշխատակիցներու և այլ մասնագիտական իրաց բազմաթիւ լուսանկարներով (60) և երեք լուսատիպ տախտակներով, որոնք պիտի ընծայեն միևնոյն ժամանակ ամեն հայասէր աչաց գեղեցիկ և բազմազան ալբոմ մը։

Որովհետև ՅՈՒՇԱՐՁԱՆԸ շատ սակաւաթիւ տպագրուած է և իր բազմալեզուեան բովանդակութեամբ նաև եւրոպացի հասարակութեան (համալսարաններու, մատենադարաններու...) համար հետաքրքրական պիտի ըլլայ՝ կրնայ շուտով սպառում գտնել. ուստի պարտք կը համարենք այժմէն ուշադիր ընել ամեն հայ գրասէր հաստատութիւններն և անհատները, որ փութան օր յառաջ ապսպրել անկէ օրինակ մը՝ նշանաւոր կեդրոններու, ընթերցարաններու և սեփական գրադարաններու համար։

ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ գինն է՝ ամեն երկրի համար՝ ճանապարհածախքը մեր վրայ՝
Թղթակազմ. . . . 40 ֆր. = 16 րուբլի = 8 դոլար
Կիսակաշի . . . 45 » = 18 » = 9 »
«Հանդիսի» 1911 և 1912 տարիներու վճարող բաժանորդաց համար՝
Թղթակազմ. . . . 30 ֆր. = 12 րուբլի = 6 դոլար
Կիսակաշի . . . 35 » = 14 » = 7 »
ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ զուտ շահը պիտի յատկացուի «Հանդէս Ամսօրեայի» դրամագլխոյն։
Դիմել՝ Rédaction de la Revue „Handes Amsorya“, Vienne (Autriche), VII/2 Mechitharistengasse 4.
(ու.) 15. 4—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.